



Մսիթարյան  
Միաբանության  
հավաքածուից

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐ

իտալացի նկարիչների գրաֆիկական աշխատանքներում



[www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)  
[www.freebooks.am](http://www.freebooks.am)



# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐ

իտալացի նկարիչների  
գրաֆիկական  
աշխատանքներում

ՄԽԻԹԱՐՅԱՆ  
ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՎԱԲԱԾՈՒԻՑ



ԻՏԱԼԱՄԱՆ  
ԲԱՐԵՎԱՍՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՐ

GIORNATE  
DELL'AMICIZIA  
ITALO-ARMENA

Սույն հատորը հրատարակվել է  
Հայ-իտալական բարեկամության օրերի շրջանակում  
և  
ԲԱՐՍԵՂ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ  
հովանավորությամբ



[www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

[www.freebooks.am](http://www.freebooks.am)

**Ա**յս պատկերագրող հայոց պատմությունն առաջին անգամ տպագրվել է դեռևս 19-րդ դարի վերջերին, Վենետիկի Սուրբ Ղազար կղզում, Մխիթարյան հայրերի կողմից:

Մխիթարյան միաբաններից Հայր Հակոբոս Իսապետյանը (1835 - 1902) 1885 թվականին Վենետիկում ֆրանսերենով հրատարակված «Հայոց պատմության» (Histoire de l'Arménie) նախաբանում տեղեկացնում է, որ հայ մեծահարուստ ժան Արաթուն Բատավիացին (Jean Arathoon de Batavia) կամ հայկական անունով Հովհան Հարությունյանը, հայրենասիրական մղումից դրդված, դիմում է իրեն «փնտրելու և ժողովելու մեր սիրասուն Հայաստանի պատմության գլխավոր անցքերը՝ առաջապես թե՛ իրական»: Հայր Հակոբոսը, որ բանասեր էր, բարգմանիչ, տիրապետում էր մի շարք եվրոպական լեզուների և 1871 - 72-ին եղել էր «Բազմավեպի» խմբագիրը, կազմում է այս ժողովածուն՝ նյութը բաղելով հայ բանահյուսությունից և պատմագրությունից, հատկապես Մովսես Խորենացու և Միրայել Չամչյանի Հայոց պատմությունից:

Հայոց պատմության նկարագրողումների համար Մխիթարյան հայրերը դիմում են ժամանակի Վենետիկի հայտնի վարպետներին, որոնց ծախսերը նույնպես հոգում է ժան Արաթունը:

Նրանցից մեկ հայտնի են Չաստյի, Ֆուզարոյի և Կանեղյայի անունները: Ջուզեպպե Կանեղյան վերոնացի Կանեղյա ընտանիքի սերունդներից է: Հայրը նույնպես նկարիչ էր, պապը՝ ճարտարապետ և բատերական նկարիչ: Ջուլիանո Չաստնի (1833 - 1889) նկարիչ էր և մեծ տպարանատեր Տրեվիզում (Վե-

նետիկի մարզ) և համագործակցում էր Սուրբ Ղազարի տպարանի հետ:

Նրանք պատկանում են 18-րդ դարի իտալական դասական նկարչության դպրոցին և այդ ավանդույթներով փայլուն կերպով իրականացնում են Մխիթարյանների պատվերը:

Այդ շրջանում, շնորհիվ մասնավորապես Վենետիկի Սուրբ Ղազար կղզում 1700-ականների սկզբից հաստատված Մխիթարյանների գիտական, կրթական և լուսավորչական լայնածավալ գործունեության, իտալական միջավայրում մեծ էր հետաքրքրությունը հայերի և Հայոց պատմության նկատմամբ: Իտալացի հայտնի շատ վարպետներ իրենց գործերում անդրադառնում էին հայկական թեմային. հայտնի են Ֆրանչեսկո Չունյոյի (1708 - 1787) «Գրիգոր Լուսավորիչը մկրտում է Տրդատ քաղափորին», Ֆրանչեսկո Մաջջոտոյի (1750 - 1805) Սր. Մեսրոպ Մաշտոցի և Սր. Սահակ Պարթևի դիմանկարները, Ռիժանտինիի «Մար Աբաս Կատինան Հայոց պատմության մատյանը հանձնում է Վաղարշակ քաղափորին» (1836), Լեոնարդո Գավանյինի «Ավարայրի ճակատամարտը» (1872), Պարմա իլ Ջովաննի «Սուրբ Բարդուղիմեոս առաքյալը մկրտում է Հայոց քաղափորին», Հանրի դը Լաբորդի «Երուսաղեմի Ս. Հովհաննեսի խաչակիրները հավատարմության ընծաներ են մատուցում Հերոմ քաղափորին» կտավները և այլ գործեր, որոնց մեծ մասն այսօր պահվում է Սուրբ Ղազարի բանագրանում:

Մակայն հայոց պատմության պատկերագրական գրեթե անբողջական ընդգրկումն առաջին անգամ իրականացվում է



**Ֆրանչեսկո Մաջուտտո**

(1750 - 1805)

Ա. Մեսրոպ Մաչատոց



**Ֆրանչեսկո Չուկչի**

(1708 - 1787)

Ս. Գրիգոր Լուսավորիչը մկրտում է  
Տրդատ քաղաքապետին



**Ֆրանչեսկո Մաջուտտո**

(1750 - 1805)

Ա. Աստիակ Պարթև



Չաստյի, Կանեղայի և Ֆուգարոյի գրաֆիկական գործերում: Կկարագարդելով Հայր Հակոբոս Իսավերդենցի «Հայոց պատմությունը», որ ճանաչողական քնույթի գործ է և առանձին հերոսների ու հայտնի անցքերի միջոցով ընդհանուր պատկերացում է տալիս Հայաստանի անցյալի մասին, նրանք ստեղծում են մոտ վեց տասնյակ գրաֆիկական աշխատանք, որոնց մեջ հայոց պատմության նշանավոր դրվագները ներկայացվում են կատարողական բարձր մակարդակով և հմուտ ու տպավորիչ կազմվածքով:

Չաստն, Կանեղան և Ֆուգարոն եվրոպական լավագույն սովանդությունով վերակերտում են առասպելական և իրական այն միջավայրը, բնասպատկերներ, ճարտարապետական շինություններ, քաղաքային և ռազմի տեսարաններ, պայատական ինտերիերներ, ժամանակի զենքուզրահ, հագուկապ, արդուզարդ, որտեղ տեղի են ունենում պատմական իրադարձությունները և զործում են հերոսները: Այդ վարպետության շնորհիվ մեր աչքի առջև հասնում են հայոց պատմության անցյալի փառքի բեկորները, որ երբևէ այդպիսի կենդանությանը և ժամանակագրական կարգով առիթ չէինք ունեցել տեսնելու: Իտալացի նկարիչների մատուցմամբ մեր պատմությունը ներկայացվում է հումա-հռոմեականի և Միջագետքի հետ միահյուսված, զետեղվում այն տարածքի վրա, որտեղից սկիզբ են առնում եվրոպական ընդհանուր քաղաքակրթության ակունքները:

Հայր Հակոբոս Իսավերդենցի 1885 թվականի հրատարակությունից ի վեր այս աշխատանքներն ունեցել են այլ հրատարակություններ նույնպես միշտ Ս. Ղազարի տպարանից:

Դրանցով հետագայում հատկապես նկարագարդելի են Մխիթարյանների դպրոցական դասագրքերը:

Այդ գրաֆիկական գործերը մինչև այսօր պահվում են Վենետիկի Սուրբ Ղազարի Մխիթարյան բանգարանում, որոնց մեծ մասը՝ մոտ քառասուն աշխատանք, առաջին անգամ դուրս բերվեցին այնտեղից և 2005 թվականի հոկտեմբերից մինչև հաջորդ տարվա մարտ ամիսը ցուցադրվեցին Հայաստանի Ազգային պատկերասրահում:

Ներկա հրատարակության գաղափարը ծնվեց այդ օրերին, նպատակ ունենալով մեր հանրությանը, հատկապես դպրոցականներին և երիտասարդներին ավելի լայնորեն ծանոթացնել մեր անցյալի էջերին՝ դիտված խոսպացի վարպետների աչքերով:

Հրատարակության մեջ նկարները խմբավորված են երեք մեծ բաժիններում՝ հնագույն և անտիկ շրջան, քրիստոնեական միջնադար և Կիլիկիո Հայոց քաղաքություն:

Այս նկարներն ստեղծվել են հայոց ավանդական պատմահայեցողության հիման վրա, որն ինչ-որ տեղ տարբերվում է այսօրվա պատմագիտական ըմբռնումներից:

Հաշվի առնելով, որ հայոց պատմությունն ինքնին ծանոթ է հանրությանը՝ հրատարակության մեջ առավելությունը տրվել է պատկերներին, և ուղեկցող հակիրճ տեքստն ունի զուտ ծանոթագրական բնույթ:

**Ա**մեն ժողովուրդ ունի իր հերոսական նախահայրը, որից սեր-  
ված է համարվում այդ ժողովուրդը: Ժողովուրդների այդ  
նախահայրերը անվանվում են «նահապետներ»: Հայ ժողովրդի  
նահապետն է Հայկ դյուցազնը: Պատմահայր Մովսես Խորենա-  
ցին Հայկին անվանում է Հապետոսրյան Հայկ, ասելով, թե Հայկը  
Նոյի երեք որդիներից Հաբեթի տոհմից էր: Նա այսպես է գրում  
Հայկի մասին. «Այս Հայկը վայելչակազմ էր, քիկնավետ, խիստ  
զանգուր մազերով, վառվուռն աչքերով, հաստ բազուկներով: Մա  
բաջ և երևելի հանդիսացավ հսկաների մեջ, դիմադրող այն բոլո-  
րին, ովքեր ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների և դյուցազուն-  
ների վրա տիրապետելու»:

Համաձայն ավանդության, Հայկ դյուցազնը սպրեկ է աշտա-  
րակաշինության ժամանակ: Աստվածաշնչում ասվում է, որ երբ  
մարդիկ անբարտանալով ցանկանում են Բաբելոնում դեպ երկինք  
ձգվող մի աշտարակ կառուցել և Աստծուն հասնել, աստվածային  
ազդմամբ աշտարակը կործանվում է, և մարդիկ էլ սկսում են խո-  
սել տարբեր լեզուներով: Այդ ժամանակ, ինչպես գրում է  
Խորենացին, Բել անունով մեկը, երբ սկսում է իրեն ենթարկել ճյու-  
րդոր դյուցազուններին, նրանցից Հայկը չի ենթարկվում Բելին:

Եվ Հայկը, շինազանդվելով Բելին, իր Արամանյակ որդու և ողջ  
գերդաստանի ու սպասափորների հետ միասին գալիս է Արարատ-  
յան երկիրը: Այդ ժամանակ Տիտանյան Բելը, հսկայական զորք  
հավաքելով, գալիս է ուժով իրեն ենթարկելու Հայկին: Լսելով Բելի  
հարձակման լուրը՝ Հայկը «շտապով հավաքում է իր որդիներին ու  
բռուններին, բաջ և աղեղնավոր մարդկանց» և գալիս է Վանա ծովի  
ափը: Այստեղից էլ ասաջանալով հասնում է Բելի քանակին:

Բելը, գորքով շրջապատված, կանգնել էր մի բարձր բրդի վրա,  
որպեսզի այստեղից հեռուեր պատերազմի ընթացքին: Խորենա-  
ցին գրում է. «Աղեղնավոր Հայկը իրեն առաջ է նետում, մտա է հաս-  
նում արքային, պինդ բաշում է լայնալիճ աղեղը, երեքսլյան նետը  
դիպցնում է նրա կրծքի տախտակին, և սլաքը, շեշտակի անցնելով  
նրա քիկունքի միջով, գետին է խրվում»: Բելի գորքը, տեսնելով իր  
հրամանատարի այսպես սպանվելը, խուճապահար փախչում է:

Այդ ճակատամարտի տեղը Հայկը անվանում է Հայք, այսինքն  
այն տեղը, որ Հայկը հաղթեց Բելին և նվաճեց իր ազգակիցների  
ազատ ապրելու իրավունքը: Այնուհետև Հայք է անվանվում Հայ-  
կի երկիրը, իսկ ժողովուրդը՝ հայեր, որով Հայկ և Հայաստան  
անունները ծագում են մեր Հայկ նահապետից:



G. H. Hoops





Ջուլիանո Չաստ  
Արամը  
Արմավիրի դարսդի  
աճառակին է  
գամում  
Նյուբար Մադեսին

**Հ**այկ նահապետի Արամայիս բռուն բռն Գեղամի բռն էր Արամը: Նա Հայոց աշխարհի սահմանները պաշտպանելու համար հիսունհազարանոց զորք է հավաքում և Հայաստանի սահմանների մոտ հանդիպում է մեղեացիների զորքին, որոնց առաջնորդն էր Նյուբար Մադես անունով մեկը: Խորենացին այդ մասին գրում է. «Արամը, հանկարծորեն նրա վրա հարձակվելով արևը ծագելուց առաջ, կոտորեց նրա բազմաթիվ ամբոխը և իրեն Նյուբարին էլ, որ Մադես էր կոչվում, ձերբակալ անելով բն-

րեց Արմավիր և այնտեղ պարսպի աշտարակի ծայրին հրամայեց պատին վարսել՝ երկաթե ցից մխելով ճակատի մեջ, ի ցույց դնելով անցորդներին և բույր եկողներին, իսկ նրա աշխարհը, մինչև Չարասպ կոչված լեռը, իրեն ծառայեցնելով հարկատու դարձրեց»:

Խորենացին գրում է, որ Հայաստանն օտարները «Արմենիա» են անվանում ի պատիվ Արամի, որի քաջագործությունների և հաղթանակների համբավը տարածվել էր հարևան երկրներում:

Մովսես Խորենացի,  
Հայոց պատմություն,  
Գիրք Ա, գլուխ ԺԳ-ԺԴ

Ջուլիանո Չաստ  
Արա Գեղեցիկ  
և Շամիրամ



**Ա**րա Գեղեցիկը Արամի որդին էր, և հոր մահից հետո նա է ժառանգում արքայական գահը: Արան հռչակված էր իր գեղեցկությամբ, որի համար նրան «Գեղեցիկ» են անվանում: Նրա գեղեցկության համբավը հասնում է նաև Ասորեստանի թագուհի Շամիրամին: Շամիրամը Արա Գեղեցիկի մոտ պատգամավորներ է ուղարկում ընծաներով ու նվերներով և շատ աղաչանքներով ու պարզևների խոստումով խնդրում է գալ Նինվե իր մոտ և իրեն կին առնել և բոլորի վրա թագավորել:

Արան մերժում է Շամիրամին. վերջինս չարացած՝ զորք է հավաքում և հարձակվում Հայոց աշխարհի վրա: Շամիրամը ճակատամարտից առաջ իր զորապետներին պատվիրում է այնպես

անել, որ Արան ոչ թե սպանվի, այլ գերի վերցվի: Կռվի ժամանակ, սակայն, Արան զոհվում է: Իմանալով Արայի զոհվելու մասին՝ Շամիրամը մարդիկ է ուղարկում, որպեսզի գտնեն և բերեն Արային: Շամիրամը պատվիրում է Հայոց արքայի մարմինը տանել և դնել իր ապարանքի վերնատանը:

Այս ընթացքում հայոց զորքը, համախմբելով իր ուժերը, պատրաստվում է նոր ճակատամարտի՝ Արայի վրեժը լուծելու համար: Շամիրամը, սակայն, ասում է, թե ես իմ աստվածներին հրամայեցի նրա վերքերը լիզել, և նա կկենդանանա: Ըստ ժողովրդական հավատալիքի, Արային լիզելով կենդանացրել են արալեզները, որոնք դիցաբանական շնակերպ կենդանիներ են:



Ջուլիանո Չաստ

Անուշավանի

ընծայումը

Արմավիրի սոսիների

սրբազան դուռակին

**Ա**նուշավանն Արա Գեղեցիկի թոռն էր՝ Կարդոսի զավակը: Այս Կարդոսն Արայի գոհվելու ժամանակ տասներկու տարեկան էր: Շամիրամը Արա Գեղեցիկի հանդեպ տաժաժ սիրո համար նրան ևս Արա է անվանում և նրան հանձնում հոր իշխանությունը: Արան էլ, ի նշան այս վստահության, հավատարիմ է մնում Շամիրամին: Այս մասին Մովսես Խորենացին գրում է. «Արայան Արան պատերազմի մեջ մեռնում է Շամիրամի հետ, բողմելով արու զավակ՝ գործով հզոր, խոսքով հանճարեղ Անուշավան Սոսանվերին, որովհետև նա, կրոնական պաշտամունքի համաձայն, նվիրված էր Արմենակի սոսի ծառերին Արմավիր քաղաքում, որոնց տերևների հանդարտ կամ սաստիկ շարժվելուց, նայելով քամու ուժին և ուղղությանը, մեր Հայոց աշխարհում սովոր էին գուշակություններ անել երկար ժամանակ»:

Խորենացու Պատմության այս հատվածը վկայում է, որ Հայաստանում եղել է սոսիների և ընդհանրապես սրբազան ծառերի պաշտամունք, որոնց միջոցով տարբեր գուշակություններ են կատարվել: Սոսիների պաշտամունքի հետ է կապված և «սոսափյուն» բառը՝ սոսիների տերևների՝ որպես թե ավերի իրար շփվելով ձայն արձակելը: Սոսիների սոսափյունն իր խորհրդավոր խշշյունով սրբազան մի սարսուռ էր առաջացնում, և համաձայն հին հավատալիքների՝ թվում էր, թե սոսիներն իրենց այդ խշշյունով մարդկանց համար տարբեր գուշակություններ են կատարում և պատմում տեղի ունենալիք դեպքերի մասին:

Ըստ ավանդության, Անուշավան Սոսանվերը Արա Արայանի գոհվելուց հետո ապրել է վաքսուներեք տարի և մահացել Քրիստոսից առաջ 1661թ.:

Մովսես Խորենացի,  
Հայոց պատմություն,  
Գիրք Ա, գլուխ Ի





Հայոց  
Չարմայր  
նահապետը  
Տրոյական  
դասերագմի  
ժամանակ  
սղանվում է  
Աֆիլեսի հետ  
մարտնչելիս

**Խ**որենացին գրում է, որ Տրոյական պատերազմին մասնակցել է նաև Չարմայր նահապետը: Նա Ատրեստանի Տևտամոս քաղաքորի պատվերով եթովպական զորքի հետ օգնության է գնացել պաշարված Տրոյային՝ Տրոյայի Պրիամոս քաղաքորի խնդրանքով: Խորենացին ասում է, որ Չարմայր նահապետը, հասնելով Տրոյա, «այնտեղ հեղենացոց քաջերից վիրավորվելով՝ մեռնում է, քայց կկամենայի, թե Աֆիլեսից և ոչ թե մի ուրիշ քաջից»:

«Իլիականում» թեև որևէ հիշատակություն չկա Ատրեստանի Տևտամոս քաղաքորի և նրա ուղարկած օգնական զորքի մասին, սակայն հույն պատմիչ Դիոդորոս Սիկիլիացին (Ն. Ք. Ա դ.) իր Պատմության երկրորդ գրքի 22-րդ բաժնում գրում է, որ Տևտամոսը Պրիամոսի խնդրանքով օգնության է գնացել տրոյացիներին: Խորենացուն հաջորդող շրջանի հայ հեղինակները, տարբեր ավանդությունների հիման վրա, արդեն գրում են, թե Չարմայրը զոհվել է Աֆիլեսի հետ մարտնչելիս:

Մովսես Խորենացի,  
Հայոց պատմություն,  
Գիրք Ա. գլ. ԺԾ, ԼԲ





Ջուլիանո Չաստ  
Աժդահակի երազը



**Հ**այոց Տիգրան Երվանդյան բազավորը (Ն. Ք. 560-535թթ.) դաշինք էր կնքել Մարաստանի Աժդահակի հետ, սակայն վերջինիս մտահոգում է Պարսից Կյուրոս բազավորի հետ Տիգրանի հաստատած դաշինքը: Մի գիշեր Աժդահակը տեսնում է մի երազ, որից սարսափահար արթնանում է և կանչում իր խորհրդատուներին: Ասում է, որ երազում ինքը գտնվում էր մի օտար երկրում մի լեռան մոտ, որը բարձր գագաթ ուներ և սաստիկ ստոնածանիքով էր պատված: Ենթադրում է, որ այդ լեռը Հայոց աշխարհում է գտնվում: Երբ նայում է այդ լեռան գագաթին, տեսնում է մի ծիրանագգեստ կին, որը բռնված էր ծննդյան երկունքով: Այդ ժամ կինը երեք զավակ է ծնում՝ երեք կատարյալ դյուցազուններ: Երանցից առաջինը, առյուծ հեծած, սլանում է դեպ արևմուտք, երկրորդը, ընծառյուծ հեծած, դեպ հյուսիս է ընթա-

նում, իսկ երրորդը, վիթխարի մի վիշապ սանձած, Մարաց բազավորության վրա է սլանում: «Երբ հանկարծ վեր նայեցի, տեսա որ այն վիշապ հեծած մարդը, կարծես արծվի քեռով սլանալով վրաս հարձակվեց և մոտենալով ուզում էր աստվածներին կործանել: Իսկ ես՝ Աժդահակս, առաջ գնալով, այդ հարձակումն ինձ վրա ընդունեցի՝ սրանչեփ դյուցազնի հետ կռվի բռնվելով»:

Մենամարտն ավարտվում է Աժդահակի կործանմամբ, և այս երազը նշանակում էր, որ Տիգրան Երվանդյանը պետք է հարձակվի և կործանի իր բազավորությունը: Վստահ չլինելով որ կարող է հաղթել Տիգրանին, Աժդահակը որոշում է ամուսնանալ Տիգրանի քրոջ՝ գեղեցկուհի և խելացի Տիգրանուհու հետ և ձեռք բերելով Հայոց արքայի վստահությունը՝ որևէ ձևով սպանել նրան:

Սովյես Խորենացի,  
Հայոց պատմություն,  
Գիրք Ա, գլ. ԻԴԻԷ



**Ջուլիանո Չաստ**

Տիգրանոսի  
հարսնության է  
գնում Մարասանի  
Ածղահակ  
բազավորին

**Ծ**րագրելով Տիգրանին խաբեությանը սպանելու համար ամուսնանալ նրա քրոջ հետ՝ Ածղահակն իր պատգամաբերներին մեծագին գանձեր և մի նամակ է տալիս, որ տանեն և հանձնեն Տիգրանին: Տիգրանը չենթադրելով, թե Ածղահակն ինչ դավ է նյութում իր դեմ, քրոջը բազավորավայել հանդիսությանը ուղարկում է Ածղահակի մոտ: Ածղահակը, մեծ պատիվների արժանացնելով Տիգրանուհուն, այնուհետև փորձում է նրան խաբեությանը իր կողմը գրավել: Խորագետ գեղեցկուհին, հասկանալով Ածղահակի մտադրությունը, իրեն վստահելի մարդկանց միջոցով լուր է ուղարկում Տիգրանին՝ նրան զգուշացնելով Ածղահակի ծրագրած դավադրության մասին:

Տիգրանը, այսպիսով ծանոթ լինելով Ածղահակի ծրագրած դավադրությանը, պատգամաբերների միջոցով հայտնում է, որ իրեն ամեն բան հայտնի է, որից հետո երկու կողմերն էլ պատերազմի են պատրաստվում: Տիգրանը զորքերի մեծ բազմությանը արշավում է Մարաստան: Սկսված ճակատամարտի ժամանակ Տիգրանը «Ածղահակի երկաթե ամուր գրահը ինչպես ջուր ճնդելով՝ Ածղահակին շամփում է իր նիզակի ընդարձակ տեղին և ձեռքը հետ քաշելիս նրա բոքի կեսն էլ գեների հետ դուրս է բերում»: Այս ճակատամարտից հետո Տիգրանը քրոջը՝ Տիգրանուհուն, ուղարկում է բնակության իր հիմնած Տիգրանակերտ քաղաքը:

Մովսես Խորենացի,  
Քաղոց պատմություն,  
Գիրք Ա, գլ. ԽԸ-Լ

**Վ**ահագն Վիշապաբադը հայկական պանթեոնի երրորդ աստվածությունն էր Արամազդից և Անահիտից հետո: Նրա գլխավոր մեհյանը գտնվում էր Տարոնի Աշտիշատ փայրում, որը նախաքրիստոնեական Հայաստանի պաշտամունքային գլխավոր կենտրոնն էր: Այստեղ նրա հետ միասին պաշտվում էին նաև Արամազդը, Անահիտը և Աստղիկը: Խորենացին գրում է, որ Գողթան երգիչները բաժբիւններով երգել են Վահագնի ծննդյան հետևյալ երգը.

Երկնում էր երկինք, երկնում էր երկիր,  
Երկնում էր և ծովը ծիրանի.  
Երկունքը բռնել էր ծովում  
Նաև կարմրիկ եղեգնիկին:

Եղեգնի փողով ծուխ էր ելնում,  
Եղեգնի փողով բոց էր ելնում,  
Եվ բոցից դուրս էր վազում  
Մի խառնյալ ղաթանեկիկ:

Վազում էր խառնյալ մի ղաթանեկիկ,  
Նա հուր մազեր ուներ (աղաթի)  
Բոց մորուք ուներ,  
Եվ աչքերն էին արեգակներ:

Ինչպես երևում է այս երգից, Վահագնը ծնվում է երկնքի և երկրի միախառնումից, որն ամպրոպային աստծո հատկանիշն է հին ժողովուրդների հավատալիքներում: Խորենացին գրում է, որ Վահագնի մասին, Հերակլեսի քաջագործությունների նման, երգեր էին երգում: Վահագնից հայոց քազավորներն ու զորավարները քաջություն են խնդրել: Ինչպես գրում է Ագաթանգեղոսը Հայոց Տրդատ արքան, մինչ քրիստոնեություն ընդունելը, իր գրած նամակներից մեկն սկսում է հետևյալ տողերով. «Քաջություն ամենայն Հայոց աշխարհիս քաջն Վահագնից»: Վահագն-Հերակլես ընդհանրության արտահայտություններից է Ծիր Կաթին համաստեղությունը, որը հունական դիցաբանության մեջ կապվում է Հերակլեսի, իսկ հայկականում անվանվելով Հարդագողի ճանապարհ՝ Վահագնի հետ:

Խորենացին գրում է նաև, թե Վահագնը Տիգրան Երվանդյանի երրորդ որդին էր:





**Հ**այոց պատմության ամենանշանակալից դեմքերից է Տիգրան Երկրորդը (ծնվ. Ն. Ք. 140, բզվ. 96/95-55թթ.), որն իր գործունեության և կատարած նվաճումների համար արժանանալու էր «Մեծ» պատվանունին: Որդին էր Արտաշիսյան հարստության թագավորներից Տիգրան Առաջինի: Վերջինս, չկարողանալով դիմադրել պարթևական ներխուժմանը, հաշտություն կնքելիս, նաև որպես պատանդ, տալիս է որդուն՝ ապագա Տիգրան Մեծին:

Տիգրան Ա-ի վախճանումից հետո, ի գին պատանդության, Պարսկաստանի արքա Միհրդատ Բ Արշակունուն գիջելով Հայաստանի հարավարևելյան գավառները, որոնք պատմագրության մեջ հայտնի են 70 հովիտներ անվամբ, Տիգրանը Ն.Ք. 96-95թթ. 45 տարեկան հասակում ժառանգում է Հայոց գահը: Գահ բարձրանալով՝ Տիգրան Երկրորդն սկսում է վարել եռանդուն արտաքին և ներքին քաղաքականություն: Ն.Ք. 94-ին նա ռազմաքաղաքական դաշինք է կնքում Պոնտոսի Միհրդատ VI Եվպատոր թագավորի հետ: Կարգի բերելով զինված ուժերը՝ 94-93-ին Ծովքի ապագա թագավորությունը միացնում է Մեծ Հայքին՝ հիմնականում ավարտելով հայկական հողերի միավորման՝ իր նախորդների սկսած գործը:

Տիգրան Մեծն այնուհետև նախ ետ է գրավում պատանդության համար տրված 70 հովիտները, ապա Ն.Ք. 85թ. հայ-պարթևական

պայմանագրով Առաջավոր Ասիայում հաստատում է իր գերիշխանությունը, և Պարթև Արշակունիները նրան են գիջում «արքայից արքա» տիտղոսը:

Ն.Ք. 70-ական թթ. Տիգրան Մեծի գերիշխանությունը տարածվել էր Կասպից ծովից մինչև Միջերկրականի արևելյան ափերը և Մեծ Կովկասի լեռնաշղթայից մինչև Կարմիր ծով: Տիգրան Մեծի ստեղծած վիթխարածավալ պետության մասին Պատմահայր Մովսես Խորենացին գրում է. «Մեր բնակության սահմաններն ընդարձակելով հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը. բոլոր իր ժամանակակիցներին նախանձելի եղավ, իսկ հետո եկողներին՝ ցանկալի թե՛ ինքը և թե՛ իր ժամանակը»:

Հունա-հռոմեական նշանավոր պատմագիր Պլուտարքոսը Ն.Ք. 127-45 թթ. Տիգրան Մեծի աշխարհակալ արքա լինելն այսպես է նկարագրում. «Նրա մոտ գտնվում էին շատ թագավորներ, որոնց ժառանգների դիրքին էր դասել, իսկ նրանցից չորսին նա մշտապես իր մոտ էր պահում՝ որպես ուղեկիցներ կամ քիկնապահներ, և երբ նա գնում էր ձիով, նրանք, կարճ քիտոններ հագած, վազում էին կողքից, իսկ երբ նստած էր լինում և զբաղվում պաշտոնական գործերով, ձեռքները կրծքներին դրած՝ կանգնում էին նրա երկու կողմում»:

Պլուտարքոս,  
Չուգաեռ  
կենսագրություններ,  
րաժին XXI







Ջ. Ֆուզարո

Տիգրան Երկրորդի  
կանանոցի և  
արժանական  
զանձերի  
դուրսբերումը  
դաճարված  
Տիգրանակերտից

**Ի**ր կատարած նվաճումներից հետո Տիգրան Մեծը Ն.Ք. 83-78թթ. Արևմտյան Տիգրիսի ձախակողմյան վտակի ափին, այն տեղում, ուր, համաձայն հռոմեական պատմագիրների, հայոց արքայական բազմ առաջին անգամ դրել է իր գլխին, կառուցում է հելլենիստական ոճի նոր մայրաքաղաք, ուր շքեղ պալատների և տաճարների կողքին կառուցում է նաև հունական ոճի ամֆիթատրոն: Պլուտարքոսը Տիգրանակերտի մասին գրում է. «Տիգրանակերտը լի էր զանձերով և աստվածներին նվիրաբերված քանկարժեք ընծաներով, քանզի մասնավոր անձինք և մեծատոհմիկները, ցանկանալով հանոյանալ քաղաքին, միմյանց հետ մրցում էին քաղաքի շենության ու ընդարձակման համար»:

Հռոմեական կայսրությունը երբ սկսում է իր առաջխաղացումը Ասիայում, հռոմեացի զորավար Լուկուլլոսը Ն.Ք. 69թ. գարնանը 40 հազարանոց բանակով Կասպաղովկիայի վրայով ներ-

խուժում է Տիգրան Մեծի քաղաքորոտքյան սահմանները՝ արագորեն շարժվելով դեպ Տիգրանակերտ: Առնելով Լուկուլլոսի հարձակման լուրը՝ Տիգրանը որոշում է թողնել Տիգրանակերտը՝ զորք ժողովելու և երկրի ներսում հակառակորդի առաջխաղացումը կանխելու համար: Սակայն նա չի հասցնում իր հետ վերցնել արքունական կանանոցը, ինչպես նաև պալատական զանձերը:

Նահանջից հետո, երբ վերակազմավորում է ուժերը, Հայոց քաղաքը վեցհազարանոց հեծելազորային մի ընտիր զորաբանակ է ուղարկում Տիգրանակերտ, որը ճեղքելով հակառակորդի պաշարումը, գիշերով մտնում քաղաք և այնտեղից դուրս բերում կանանոցը և զանձերը. «Իսկ զորքի մնացած մասով ինքը՝ Տիգրանը, շարժվեց Լուկուլլոսի վրա» և Արածանիի գետանցի մոտ ծանր կռուտների պատճառեց նրան:



Ջ. Խուզարո

Պոմպեոսը

դասվում է


Տիգրան Մեծի

**Հ**ռոմում երբ պարզ է դառնում Աուկուլլոսի արշավանքի ճախողումը, նրա փոխարեն ուղարկվում է մեկ այլ նշանավոր զորավար՝ Գնեոս Պոմպեոսը: Պոմպեոսը հռոմեապարթևական դաշինք է ձևավորում ընդդեմ Հայաստանի և Պոնտոսի, որից հետո պարթևական զորքերը հարձակվում են Հայաստանի վրա, սակայն պարտություն են կրում Արտաշատի մոտ: Պոմպեոսը տեսնելով, որ Հայաստանը չի կարող ծնկի բերել պարթևների միջոցով, համաձայնում է դաշինք կնքել Տիգրան Մեծի հետ: Թանակցությունները տեղի են ունենում

Ն.Ջ. 66թ. Արտաշատի մոտ գտնվող հռոմեական զորքերի ճամբարում, ուր մեկնում և Պոմպեոսի կողմից հանդիսավորապես ընդունվում է Տիգրան Մեծը: Կնքվում է պայմանագիր, որով թեև Տիգրան Երկրորդը կորցնում է իր բոլոր արտաքին նվաճումները, բացառությամբ պարթևներից կատարվածը, սակայն Հայաստանը պահպանում է իր պատմական սահմանները Եփրատից մինչև Կուր գետը և Կասպից ծովը: Արտաշատի պայմանագրով Հայաստանը նաև ճանաչվում է Հռոմի դաշնակից և բարեկամ երկիր:

Պլուտարքոս, Պոմպեոս,  
բաժին XXXIII  
Ապափանոս, Գիրք XII,  
Միհրդատական, 104





G. Fusaro



Ջ. Ֆուզարո

Հռոմեական

Կապիանոս

գորավար

Տիգրան Մեծին և  
հանձնում Միհրդատ

Պոնսացու գերի

ընկած ողորմ

Միհրդատին

**Տ**իգրան Մեծի հետ դաշինք կնքելուց հետո Պոնպետոս հետապնդում է Պոնտոսի քաղաքոր Միհրդատին, որն ուզում է տարբեր ցեղերի և ժողովուրդների ռազմիկներից կազմված մի զորաբանակով արշավել Հռոմի վրա, ինչպես ժամանակին կատարել էր Հաննիբալը: Այդ ժամանակ, սակայն, նրա որդին ապստամբություն է բարձրացնում, և Կերչում իր ամրոցում, շրջապատված Միհրդատը գերի չընկնելու համար ինքնասպանություն է գործում: Տիգրան Մեծը, Միհրդատի մահվան սուգը կա-

տարելով, արշավում է հռոմեացիների վրա՝ նրանցից վրեժ լուծելու: Տիգրանի դեմ պատերազմելու է եկնում հռոմեական զորքի սպարապետ Կապիանոսը, որին այստեղ էր թողել Պոնպետոսը Հռոմ վերադառնալիս: Կապիանոսը չի համարձակվում Տիգրանի հետ ճակատամարտ տալ և Եփրատի մոտից ետ է վերադառնում Եգիպտոս: Նա, Տիգրանի հետ գաղտնի հաշտություն կնքելով, ետ է տալիս Միհրդատի որդուն՝ պատանի Միհրդատին, որին Մաժարում բռնել էր Պոնպետոսը:

Սովետսկայնայնացի,  
Չայնոց սրատնություն,  
Գիրք Բ, գլ. ԺԶ





Թաղեոս  
առաքյալը,  
եղբայակառ սուրբ  
Սանդուխտը  
և մյուս  
նորադարձները  
քաննում

Վկայաբանություն Թաղեոս  
առաքյալի և Սանդուխտ  
կույսի

**Մ**երուհի կույս Սանդուխտը Հայոց եկեղեցու առաջին նահատակն է: Նա դուստրն էր Սանատրուկ քաղափորի, որը, համաձայն ավանդության, քաղափորել է 38-68թթ., իսկ ըստ ընդունված պատմական ժամանակագրության, 75-110թթ.:

Թաղեոս առաքյալը, գալով Եդեսիա, հավատքի է բերում Արգար քաղափորին և նրա արքունիքը, ապա գալիս Հայոց աշխարհի և հասնում Հայոց քաղափորների ամառային նստավայր Շավարշավան, որը գտնվում էր Արտազ գավառում: Այստեղ քարոզությանը, եկվանդների թժկությանը ու տարրեր հրաշա-

գործություններով շատերին է քրիստոնյա դարձնում, այդ թվում նաև՝ Սանատրուկի Սանդուխտ դստերը: Ի՞նչանալով այս մասին՝ զայրացած Սանատրուկը նորադարձ մյուս քրիստոնյաների հետ միասին քանտարկել է տալիս նաև Սանդուխտին: Թաղափորը մի քանի անգամ փորձում է համոզել դստերը՝ հրաժարվելու քրիստոնեությունից, սակայն նա ամեն անգամ մերժում է, և զայրացած Սանատրուկը հրամայում է տանել և նահատակել նրան: Թաղափորն այնուհետև հրամայում է նահատակել նաև Թաղեոս առաքյալին և բոլոր նրանց, ովքեր հավատքի էին եկել առաքյալի քարոզությանը:



Սանատրուկի  
փրկվելը իր դայակի  
հետ մի սոփիստի  
շան հետ երեւ  
ձյունների մեջ  
մնալուց հետո

**Ս**անատրուկ քաղաքորի (թգվ. 88-110թթ.) մասին Խորենացին գրում է. «Բայց թե ինչո՞ւ նա Սանատրուկ կոչվեց, պետք է ասել: Արգարի քույր Ավդեն ձմեռ ժամանակ դեպի Հայաստան ճանապարհորդելիս քուրի է պատահում Կորդվաց լեռներում. մրրիկը բոլորին ցրեց, այնպես որ ոչ մեկը չգիտեր, թե ընկերն ո՞ր մնաց: Իսկ նրա դայակը՝ Սանոտը, Բյուրատ Բագրատունու քույրը, Խոսրեն Արծրունու կինը, երեխային, որ դեռ շատ փոքր էր, սափնքների մեջ առնելով՝ երեք օր և երեք գիշեր մնաց ձյունի տակ: Սրա մասին առասպելաբանում են, թե մի ինչ-որ նորահրաշ սպիտակ կենդանի աստվածներից ուղարկվեց, և նա պահպանում էր երեխային: Բայց որքան մենք վերահասու եղանք, բանն այսպես է եղել. փնտրող մարդկանց հետ եղել է մի սպիտակ շուն, որ պատահել է երեխային և դայակին: Այս պատճառով էլ նա կոչվեց Սանատրուկ, անունը դայակից ստանալով, իբրև թե Սանոտի տուրք»:

Վիպական այս դրվագում արտացոլվել է պահապան շան (գայլի) մասին եղած մի հին հավատալիքային ըմբռնում: Այս առիթով նաև հիշենք, որ Հռոմի հիմնադիր Հռոմուլոսի և նրա եղբոր՝ Հոենուսի համար էլ ասվում է, թե նրանց գայլամայրն է կերակրել:

Ինչպես երևում է Խորենացու պատմածից, նա, որպես քրիստոնյա պատմիչ, դուրս է բողել պահապան շան պատմությունը, այն ներկայացրել որպես կենցաղային երկրորդական մի դրվագ՝ Սանատրուկի փրկվելը կապելով նրա Սանոտ դայակի հետ, վերջինիս անունով էլ քացատրելով քաղաքորի անվան ստուգաբանությունը՝ որպես Սանոտի տուրք:

Այնինչ Սանատրուկ քաղ ժողովրդական ստուգաբանությանը, այս հավատալիքին համահունչ ձևով, հավասարապես կարող էր քացատրվել նաև որպես Շան տուրք, ինչպես որ հայերենում հաճախ է տեղի ունենում շ-ս հնչյունափոխությունը (ինչպես օրինակ Շուշան-Սուսան):

Մովսես Խորենացի,  
Քայրց պատմություն,  
Գիրք Բ, գլ. ԼԶ





S. Tuszynski



Մովսես Խորենացի,  
Հայոց պատմություն,  
Գիրք Բ, գլ. ԼԷ-ԽԶ

Ջ. Ֆուգարո  
Գիսակ զորավարը  
դաժնաբեր  
ժամանակ փրկում  
Հայոց  
Արտաշես  
թագավորին



**Ս**անատրուկի մահից հետո նրա թագավորության մեջ խռովություն է ընկնում, որով հետևեց Երվանդ անունով մեկը, որը կես Արշակունի էր՝ միայն մոր կողմից, բռնության տիրանում է հայոց գահին: Երվանդը, թագավոր դառնալով, կոտորում է Սանատրուկի որդիներին՝ որպես գահի օրինական ժառանգների: Փրկվում է միայն Արտաշես անունով մի ծովեր երեխա, որին Սմբատ Բագրատունին զաղտնիորեն անցկացնում է Պարսկաստան, Պարսից թագավորի մոտ՝ արժանանալով հատուկ պատիվների: Թագավորը պատվիրում է, որ երեխան ապրի և մեծանա իր որդիների հետ:

Որոշ ժամանակ անց Պարսից արքան Սմբատին օգնական զորքով ուղարկում է Հայաստան՝ Արտաշեսին հաստատելու իր գահի վրա: Սմբատը երբ օգնական զորքով Հայաստան է մտնում, Ախուրյան գետի մոտ տեղի է ունենում վճռական ճակատամարտը Երվանդի զորքերի հետ, որոնց թվում էին նաև տավրոսի քաջերը: Նրանց հետիոտն պատահում է Գիսակը՝ Արտաշեսի ծածուկ որդին, և կռվի մեջ մտնելով՝ նրանց սպանում է և հաղթություն տանում, որի ժամանակ նրա երեսի կեսն էլ սրով կտրում են, և նա մեռնում է այս ընթացքում: Երվանդի մնացած զորքերը փախուստի են դիմում:







Չ. Խուզարո  
 Սմբատ  
 Բագրատունին  
 Արեակունյաց  
 թագով թագադրում  
 է Արսաւեսին



**Ճ**ալատամարտում կրած պարտությունից հետո Երվանդը փախչում է և ամրանում իր կառուցած Երվանդաշատում: Երան հետապնդում է Սմբատ զորավարը փորրաթիվ ուժերով, մինչև որ Արտաշեսի գլխավորությամբ գալիս են մնացյալ օգնական զորքերը, որոնք պաշարում և գրավում են քաղաքը: Չինվորներից մեկը, գտնելով Երվանդին, վաղրով սպանում է նրան: Արտաշեսը հրամայում է բաղել Երվանդին և վրան մահարձան դնել, բանի որ նա կիսով չափ Արշակունի էր:

«Երվանդի մահից հետո Սմբատը մտնելով խուզարկում է արքունական գանձերը. Սանատրուկ թագավորի թագը գտնելով դնում է Արտաշեսի գլխին և թագափորեցնում է քոլոթ Հայոց աշխարհի վրա», գրում է Խորենացին: Արտաշեսն այնուհետև Երասխի և Մեծամորի իրար խառնվելու տեղում մի բլրի վրա կառուցում է Արտաշատ քաղաքը:

Մովսես Խորենացի,  
 Խայոց պատմություն,  
 Գիրք Բ, գլ. ԽԶ-ԽԷ





**Ա**յս ժամանակներում ալանները, Կովկասի մյուս լեռնական ժողովուրդների հետ, գալիս և ասպատակում են Հայոց աշխարհը: Արտաշեսը ժողովում է իր զորքերի բազմությունը և ճակատամարտ տալիս ալանների դեմ: Վերջիններս, փոքր-ինչ ետ նահանջելով, Կուր գետից ետ են դառնում և բանակ դնում գետի ափին հյուսիսային կողմից:

Արտաշեսն էլ գալիս և բանակում է գետի հարավային կողմում: Քանի որ հայոց զորքերը ալանների բազավորի որդուն բռնելով Արտաշեսի մոտ են քերում, ուստի նրանց բազավորը Արտաշեսից հաշտություն է խնդրում՝ խոստանալով տալ այն ամենը, ինչ որ նա կցանկանար:

Արտաշեսը երբ չի համաձայնում ետ տալ պատանուն, նրա քույրը գալիս է գետի ափը, կանգնում մի բարձրադիր վայրում և խնդրում եղբորն ազատել: «Արտաշեսն այս լսելով գնաց գետի ափը և տեսնելով գեղեցիկ կույսին ու լսելով նրանից ինաստուն խոսքեր, ցանկացավ նրան կնության առնել, դաշինք և ուխտ դնել քաջերի ազգի հետ և պատանուն խաղաղությամբ արձակել: Նրա դայակ Սմբատը հավանություն է տալիս և մարդ է ուղարկում ալանների բազավորի մոտ, որ ալանների արքայագն օրիորդ Սաբենիկին կնության տա Արտաշեսին: Ալանների բազավորը չի համաձայնում: Այնժամ Արտաշեսը որոշում է փախցնել Սաբենիկին: Խորենացին գրում է. «Վիպասանները երգելիս այս տեղն ատասպելարանում են՝ ասելով.

Հեծավ արի Արսաես արքան գեղեցիկ սև ձին,  
Եվ հանելով ոսկեօղ շիկափուկ դարանը  
Եվ անցնելով գետն իբրև սրաքև արծիվ

Եվ նսեելով ոսկեօղ շիկափուկ դարանը,  
Զգեց մեջքը Ալանաց օրիորդի,  
Եվ ռաս ցավեցրեց փափուկ օրիորդի մեջքը,  
Արագարար իր բանակը հասցնելով»:



Ջ. Ծուկարյան

Արսաեսի

Սաբենիկին

Մովսես Խորենացի,  
Հայոց պատմություն,  
Գիրք Բ, գլ. Ծ





**Ե**րբ Արևելքում ապստամբություն է բռնկվում Հռոմի դեմ, Հայոց Արտաշես բազավորն իր զորքերով գնում է միանալու հռոմեական կայսր Ադրիանոսին, սակայն ճանապարհին ծանր հիվանդանում և մահանում է: Խորենացին գրելով, թե որքան բազմություն մեռավ իրենք իրենց սպանելով Արտաշեսի մահվան ժամանակ, այսպես է նկարագրում Հայոց արքայի հուղարկավորությունը. «Նրա սիրելի կամայք, հարճերը և մտերիմ ծառաները, և ինչպես բազմատեսակ շքեղ պատիվներ մատուցին դիակին, քաղաքակիրթ (ազգերի) կարգով, և ոչ թե բարբարոսների նման: Նրա դագաղը, ասում է, ոսկեղեն էր, գահը և անկողինը՝ քեհեզից և մարմինը պատող պատմունճանք՝ ոսկեթել, գլուխը քազ դրած, ոսկյա զենքն առջևը: Գահը շրջապատում էին որդիներն ու ազգականների բազմությունը, և սրանց մոտ զինվորական պաշտոնյաները, նահապետները, նախարարական զնդիրը և ընդհանրապես զորականների վաշտերը, ամենքը զինված, որպես թե պատրաստվում են պատերազմի. առջևից պոսնձե փողեր էին հնչեցնում, իսկ հետևից սեազգեստ ձայնար-

կու կույսեր և լաղկան կամայք, բոլորից վերջը՝ ռամիկների բազմությունը: Եվ այսպես տանելով քաղեցին: Նրա գերեզմանի վրա կամավոր մահեր էին լինում, ինչպես վերն ասացինք: Սա բազավորեց քառասուն և մի տարի՝ այսպես սիրելի լինելով մեր աշխարհին»:

Գրիգոր Մագիստրոսի նամակներից մեկում պահպանվել է օտարության մեջ մահացող Հայոց Արտաշես բազավորի կարոտարաղձ խոսքերը ներկայացնող հետևյալ ժողովրդական-գուսանական երգային հատվածը.

Ռվ կսար ինձ ծուխը ծխանի  
Եվ առավոտը Նավասարդի,  
Վազը եղնիկների  
Եվ վարզելը եղջերունների...  
Մենք փող էինք փչում  
Եվ թճուկ զարկում  
Ուղես կարգն է բազավորների:





**Ա**րտաշեսից հետո թագավորում է նրա Արտավազդ որդին: Խորենացին նրա մասին գրում է. «Նա քիչ օրեր թագավորելուց հետո մի անգամ անցնում էր Արտաշատ քաղաքի կամուրջով Գինա ակունքների մոտ կինճեր և վայրի էշեր որսալու, հանկարծ ինչ-որ ցնորքից շփոթվում խելագարվում է, ձիուց վայր է ընկնում մի խոր փոսի մեջ և այնտեղ խորասուզվում անհետանում է: Նրա մասին Գողթնի երգիչներն այսպես են առասպելաբանում. Արտաշեսի մահվան ժամանակ, հեթանոսական սովորությանը, շատ կուտորածներ էին լինում. սրա վրա, ասում են, Արտավազդը նեղանում է և ասում է հորը.

Երբ դու գնացիր

Ու բոլոր երկիրը հեզ հեռ սարսռ,

Ես այս ավերակների վրա

Ինչդե՞ս թագավորեմ:

Սրա համար Արտաշեսը նրան անիծելով այսպես է ասում.

Թե դու հեծնես որսի գնաս

Ազասն ի վեր, դեղի Մասիս,

Քաջերը հեզ բռնեն սանեն

Ազասն ի վեր, դեղի Մասիս.

Այնտեղ մնաս, լույս չեստես:

Պատավները սրա մասին գրուցում են, թե արգելված մնում է մի քարանձավի մեջ, երկաթե շղթաներով կապված, երկու շուն կրծում են նրա շղթաները, և նա ջանք է անում դուրս գալ և աշխարհին վերջ տալ, բայց, ասում են, դարբինների կռանահարության ձայնից կապանքներն ամրանում են: Ուստի դեռ մինչև այժմ էլ դարբիններից շատերը, առասպելին հետևելով, կիրակի օրերը երեք կամ չորս անգամ (կռանով) խփում են սալին, որպեսզի, ասում են, Արտավազդի շղթաներն ամրանան»:

Անհրաժեշտ է նշել, որ լեռան մեջ փակվելով բանտվելու պատճառով հանդիպում է նաև մյուս ժողովուրդների մոտ, այն փոխանցվել է նաև «Մասնա ծոերի» Փոքր Միերի ճյուղին:

Հինգերորդ դարի հայ մատենագիր Եզնիկ Կողբացին ևս գրում է Արտավազդի մասին ասելով, թե հեթանոսները սնտաի կերպով հավատում են, որ նա շղթայված մի թագավորացն է, որը մի օր դուրս է գալու և ազատություն բերելու աշխարհին:

Ինչպես նշում է Մանուկ Աբեղյանը, Եզնիկի այս քացատրությունը պատմական արձագանքն է Տիգրան Մեծի որդի Արտավազդի շղթայվելու, որին հռոմեական զորավար Անտոնիոսը մարերի հետ դաշնակցած բռնել է և շղթայակապ տարել Եգիպտոս: Ըստ երևույթին, ժամանակին ժողովուրդն սպասել է, որ Արտավազդը ետ կվերադառնա և կտիրի Հայոց աշխարհին, սակայն այդ ակնկալիքը չի իրականացել:

Արտավազդի մասին այս պատմական գրույցը այնուհետև հաջորդ շրջանում խառնվել է Մասիսում բանտված վիշապ-Ածղահակի առասպելի հետ, և Արտավազդն արդեն դարձել է շարի կրողը:

Արտավազդի  
թագավորություն  
Մասիս  
խորխորան





**Հ**ամաձայն Խորենացու «Հայոց պատմության», Հայոց Արշակունիների թագավորական տոհմն սկզբնավորվել է Պարթև Արշակունիներից այն ժամանակ, երբ Պարսկաստանի Արշակ Մեծ արքան (թգվ. Ն. Ք. 171-138/7թթ.) Հայաստանի վրա թագավոր է կարգում իր եղբորը՝ Վաղարշակին: Մովսես Խորենացին Վաղարշակի մասին գրելիս նրա հաճախական կերպարը ստեղծել է նրան վերագրելով մի մասը այն

գործերի, որոնք կատարել են Մեծ Հայքի Արտաշես Ա, Տրդատ Ա, Վաղարշ Բ և մի շարք այլ թագավորներ: Վաղարշը նույնացվում է Մեծ Հայքի Տրդատ Ա (թգվ. 66-88թթ.) հետ, որը եղբայրն էր Պարսից արքայից արքա Վաղարշ Առաջինի, որն իր եղբորը՝ Տրդատին, կարգել էր Հայոց թագավոր Հայաստանում սկիզբը դնելով Արշակունյաց թագավորության (66-428թթ.):

Ջուլիանո Չաս  
Արշակ Պարթև  
իւր Վաղարշու  
եղբոր  
թագավոր է կարգ  
Հայաստանի վ

uon  
rplu  
cul  
onry  
and  
fru





**Ա**րուշիայան թագավորության (Ն. Ք. 189-199.) անկումից հետո Հայաստանում մի քանի տասնամյակ շփոթության և անիշխանության մի շրջան է տիրում, մինչև գահ է բարձրանում Վաղարշակը կամ Տրդատ Ա-ն:

Վաղարշակը մեծ քանակ է հավաքում և շարժվում դեպ Խաղտիք, որը գտնվում էր Տրապիզոնից հարավ, որովհետև Մորփյուղիկես անունով մի քաջ պատրաստվում էր պատերազմելու Հայաստանի դեմ: Երկու կողմերի բանակներն իրար են հանդիպում մի բարձրագագար բլրի մոտ և պատրաստվում կռվի: «Երբ այսպես շատ օրե-

րի ընթացքում երկու կողմերն ամրացան, գրում է Խորենացին, ապա պատերազմն սկսվում է մեր կողմից. ուստի և Մորփյուղիկեսը, կամա-ակամա, կազմակերպում է իր զորքի ճակատը և հանդուգն հարձակումով վրա է վազում: Բայց չհասպտեցին նրան ընդառաջ ելնել քաջ և անվանի մարդիկ Հայկի և Ասորեստանի Սենեքերիմի սերունդներից, որոնք աշտեի հարվածով քաջին սպանեցին և նրա զորքերն առաջ խառնելով փախցրին, արյան վտակներ թափելով գետինը ոռոգեցին՝ ինչպես անձրևի հեղեղներով: Այնուհետև այդ երկիրը Վաղարշակի ձեռքի տակ նվաճվելով խաղաղեցվում է»:

Մովսես Խորենացի,  
Քայրց պատմություն,  
Գիրք Բ, գլ. 7-Ե

Ջուլիանո Չասո

Մորփիլիկեսը

սղանվում է

Վաղարշակի

(Տրդատ Ա) դեմ

ճակատամարտում



Չաստ  
իկեր  
նվում է  
արսուկի  
Ա) դե  
արսուկ



By T. Tufanov



Ըստ Ռիժանտիճի

Մար Արաս

Կասինյան Հայոց

դասնություն

մասյանը հանձնում


է Վաղարշապատ

քաղաքում

**Վ**աղարշակին անվանում էին քաջ և խոհեմ: Նա ողջ երկրում վարչական առումով ևս կարգուկանոն է հաստատում սկսելով իրենից, այսինքն՝ թե ինքը և նախարարները ինչ հանդերձներ և իշխանության նշաններ են կրելու, ինչպիսին է լինելու նախարարությունների հերթականությունը ըստ պատվո աստիճանների և յուրաքանչյուր նախարարություն ինչ իրավասություններ է ունենալու: Երկիրը շենացնելու գործում նա մեծ կարևորություն է տալիս գիտությանը, իրենից առաջ եղած պատմությունը գրելուն, որպեսզի իմանա, թե իրենից առաջ հիշատակության արժանի ինչ գործեր են եղել Հայոց աշխարհում: Այս նպատակով նա Մար Արաս Կատինյան անունով ասորի մի գիտ-

նականի ուղարկում է իր եղբոր Արշակ Մեծի մոտ, խնդրելով, որ նա իր ուղարկած գիտնականին թույլատրի օգտվել արքունի դիվանից: Մար Արաս Կատինյան Նինվեի արքունական դիվանում գտնում է հունարեն գրված մի մատյան, որը պարունակում էր մինչ այդ տեղի ունեցած դեպքերի պատմությունը, նրանից հանում է Հայաստանին վերաբերող տեղեկությունները և բերում Վաղարշակին: «Եվ բարեկազմ ու քաջ աղեղնավոր, արի Վաղարշակը, կորովախոսն ու հանճարեղը, ընդունելով այն, համարելով առաջինն իր գանձերի մեջ, հրամայում է մեծ զգուշությամբ պահել արքունիքում» և այդ տեղեկությունների մի մասը հրամայում է արձանի վրա դրոշմել, գրում է Խորենացին:

Մովսես Խորենացի,  
Հայոց պատմություն,  
Գիրք Ա, գլ. Թ





Ջ. Ծուգար  
Արշակ Ա  
իր նիգալ  
մխրճում է Բա  
սյուն-արձանի մե

**Վ**աղարշակ Ա Արշակունու որդին էր Արշակ Առաջինը, ով հետևելով իր հոր առաքինի գործերին՝ Հայոց աշխարհում նոր բարեկարգություններ է կատարում: Նա հռչակվել էր հատկապես իր նիգալը մի քարե արձան-սյան մեջ մխրճելով: Այս մասին Խորենացին գրում է. «Պոնտացիների հետ պատերազմելով, Մեծ ծովի ափին [նկատի ունի Սև ծովը] իր հաղթության նշանը քոդեց՝ մի արձան, և ասում են, թե իր բոլորակ տեղով նիգալը, որ

թաթախված էր գեռուների արյան մեջ [Հովհաննես Գրատա-նակերացին գրում է՝ օձերի], նետելով մխրճում է երկնաքարից շինված արձանի մեջ, որ կանգնեցրել էր ծովեզերքում: Այս արձանը պոնտացիները երկար ժամանակ պատվում էին որպես աստվածների գործ, բայց երբ Արտաշեսը նորից պատերազմի քոնվեց պոնտացիների հետ, ասում են, նրանք այդ արձանը ծովը զցեցին»:

Սովսես Խորենացի,  
Հայոց պատմություն,  
Գիրք Բ, գլ. Թ





Ջուլիանո Չաստ

Հույժ գեղեցիկ էր  
և երգում էր  
ձեռքերով

**Տ**րդատ Բագրատունին (Բ դար) բազադիր ասպետ Սմբատ Բագրատունու թոռն էր: Մովսես Խորենացին այսպես է նկարագրում Տրդատ Բագրատունուն. «Մի սրտուտ և ուժեղ մարդ, կարճ հասակով և գծուժ կերպարանքով: Նրան Տիրան բազադորն իրեն փեսայացրեց՝ իր երանյակ դստերը նրան կնություն տալով:

Մի օր Սյունյաց Բակուր նահապետը նրան ընթրիքի հրավիրեց: Երբ զինով ուրախություն էին անում, Տրդատը տեսավ մի կին, որ շատ գեղեցիկ էր և երգում էր ձեռքերով, անունը Նագինիկ: Տրդատը նրան ցանկացավ և ասաց Բակուրին. «Այդ վարձակն ինձ տուր»: Նա պատասխանում է. «Չեմ տա, որովհետև իմ հարճն է»:

Իսկ Տրդատն այդ կինն իր մոտ քաշելով՝ սեղանակիցների առաջ զգվում, համբուրում էր նրան սիրահարված անզուսպ երիտասարդի նման: Բակուրը խանդոտելով վեր կացավ, որ կինը նրա ձեռքից խլի: Բայց Տրդատը ոտքի ելնելով ծաղկամանն իբրև զենք գործածեց, սեղանակիցներին էլ սեղանից վանեց: Կարծես մի նոր Ողիսես էր առաջ եկել, որ կոտորում էր Պենելոպեի սիրահարներին, կամ Ղապիթանների և Հուշկապարիկների կռիվ էր տեղի ունենում Պերիթոսի հարսանիքում: Այսպես իր կացարանը հասնելով իսկույն ձի հեծավ և հարճի հետ միասին Սպեր գնաց»:

Մովսես Խորենացի,  
Չայոց պատմություն,  
Գիրք Բ, գլ. 49





Խոսրով Առաջինը  
հարում և  
դասանդներ  
սանու  
հյուսիսային  
ազգերի

**Ա**րշակունյաց բազավորության նշանավոր դեմքերից էր Խոսրով Առաջինը (թգվ. 211-259թթ.), որը պատմության մեջ հայտնի է մահ «Մեծ» պատվանունով: Նա որդին էր Վաղարշ Երկրորդի (թգվ. 186-198թթ.) և հայրը՝ Տրդատ Մեծի: Խորենացին գրում է. «Հյուսիսային ազգերի բազմությունը, խազիրներից և քասիկներից բաղկացած, ճորա դռնից դուրս են գալիս իրենց առաջնորդ և բազավոր ունենալով մի ոմն Վնասեպ Սուրհապի, և գալիս անցնում են Կուր գետի այս կողմը: Նրանց դեմ է դուրս գալիս Վաղարշը մեծ բազմությամբ և քաջամարտիկ մարդկանցով, նրանց բազմությունը կոտորելով դիակները

սփռեց դաշտի երեսին և երկար տեղ նրանց հալածելով անցնում է ճորա կապանով: Այստեղ թշնամիները նորից ճակատ են կազմում, թեպետ հայոց քաջերը նրանց փախուստի մատնեցին, բայց Վաղարշը մեռավ կորովի աղեղնավորների ձեռքից: Թագավորությունն առնում է նրա Խոսրով որդին: Նա իսկույն հայոց զորքերը միացնելով անցնում է մեծ լեռը՝ իր հոր մահվան վրեժն առնելու. նա սրով և գեղարդով վանում է այդ հզոր ազգերին, բոլոր պիտանի մարդկանցից հարյուրից մեկը պատանդ է վերցնում և իբրև իր տիրության նշան՝ մի արձան է կանգնեցնում հունարեն գրով»:

Մովսես Խորենացի  
Հայոց պատմություն  
Գրք. Բ. գլ. 40





Դավաճան Անակի  
սղանությունը  
Տաբերական  
կամրջի վրա



**Խ**ոսրով Մեծի թագավորության տարիներին Արտաշիր Մասանյանը, սպանելով Պարսից արքա Արտավան Արշակունուն, սկիզբ է դնում Սասանյանների թագավորությանը:

Խոսրով Առաջինն իր արյունակից թագավորական տոհմի վրեժը լուծելու համար սկսում է ասպատակել Պարսից աշխարհը՝ հասնելով մինչև Տիգրոն: Արտաշիրի մոտ է գալիս Արշակունյաց տոհմի ողջ մնացած նահապետներից Անակը և ասում, որ եթե իր ազգատոհմից ողջ մնացածների կյանքը, որպես Արշակունիների, թագավորը խնայի, ապա ինքը կիրականացնի Հայոց արքայի սպանության գործը: Այնուհետև կեղծ մի փախուստով իր եղբոր ընտանիքի հետ գալիս է Հայաստան:

Խոսրով թագավորը ցնծությամբ է նրան ընդունում և իր թագավորության մեջ երկրորդ արքուն է տալիս: Թագավորի վստահությունը շահելով՝ Անակը հիշում է Արտաշիրին տված իր խոստումը:

Մի օր նա իր հարազատ եղբոր հետ թագավորին առանձին մի կողմ տանելով՝ «իբրև թե զբոսանքի կամ նրա հետ խորհուրդ անելու նպատակով, և պողպատե սուսերները կես մերկացրած պահելով հանկարծ անսպասելիորեն զենքերը բարձրացրին և թագավորին դիաթավալ անելով զետին տապալեցին» և փախուստի դիմեցին:

Հայոց գորքի հրամանատարները, իմանալով այս մասին, տարբեր կողմերից խմբերով սկսում են հետապնդել արքայասպան շարագործներին և նրանց հասնելով Տաբերական կամրջի վրա՝ սպանելով զեռն են նետում. «Հայակոյտ գորքի մեծամեծները, երբ այս ինացան, գունդ-գունդ բաժանվեցին ու հետապնդեցին: Աճապարում էին որքան կարելի է շուտ հասնել Մեծանորի կամրջի գլխիսը: Ծանապարհների կիրճերում կանգնեցրին նրանց և, շրջապատելով Տաբերական կամրջի մոտ, զետավեժ արեցին»:





Օսա իշխանը  
Հայոց Տրդատ  
բազավորին է  
ներկայացնում  
Խոսրովի դուխս  
արհայաբուջը



**Խ**ոսրով Մեծի սպանությունից հետո հայոց նախարարներից Արտավազդ Մանդակունին Հայոց արքայի Տրդատ որդուն փրկելով տանում է կայսեր մոտ: Նույն ձևով Ամատունյաց տոհմից Օսա նախարարը փախցնում է Խոսրով Մեծի Խոսրովի-դուխս դստերը և նրան տանում բարցնում Գարանաղյաց գավառի Անի ամրոցում:

Տրդատը, կայսեր արքունիքում և հռոմեական բանակում ծառայության անցնելով, մեծամեծ քաջագործություններ է կատարում, ի գնահատություն որոնց՝ հռոմեական Գիսկղեսիանոս

կայսրը 286թ. նրան օգնական զորքով ուղարկում է Հայաստան հայրենի գահին վերադարձանալու: Տրդատը երբ Կեսարիա է հասնում, նրան ընդառաջ են գնում հայոց նախարարները. «Եվ երբ հասավ մեր աշխարհը, տեսավ, որ Օսան սնուցել է իր Խոսրովի-դուխս քրոջը և պահպանել է գանձերն ու ամրոցը մեծ համբերությամբ, և իսկապես էլ նա համբերող էր, ժուժկալ և շատ խելացի, որովհետև նա բնախո Աստուծո մասին ճշմարտությունը չգիտցավ քայց կուրքերի ստությունը հասկացավ: Նրա պես էր և նրա օսանը Խոսրովի-դուխսը, մի օրինավոր համեստ կույս»:



Ջուլիանո Չաստ

Ս. Հովսիսիմնի  
մենամարտը  
Տրդատի հետ

**Փ**ախչելով Հռոմի Գիոկղետիանոս կայսրի (թզվ. 284-305թթ.) հետապնդումներից, որը կամենում էր ամուսնանալ նրա հետ, գեղեցկուհի կույս Հովսիսիմեն իր ընկերուհիների հետ գալիս հասնում է Հայոց թագավորանիստ Վաղարշապատ և բարձրանում տեղի հնձաններում:

Իմանալով նրանց փախչելու մասին Գիոկղետիանոսը նամակ է գրում Տրդատ թագավորին՝ ասելով, թե կույսերին գտնելու դեպքում՝ բոլոր մահվան դատապարտի, իսկ Հովսիսիմենին կամ Հռոմ իրեն ուղարկի, կամ էլ Հայաստանում իր մոտ պահի:

Տրդատը պատվիրում է անհապաղ գտնել կույսերին: Հովսիսիմենն երբ հրաժարվում է գնալ թագավորի մոտ, Տրդատը պատվիրում է նրան բռնությամբ բերել: Եվ նրան տանում են պալատ ու փակում մի սենյակում, որ կույսն աղոթում է: Այդ ժամանակ սեն-

յակ է մտնում Տրդատ թագավորը՝ փորձելով բռնությամբ տիրանալ կույսին, իսկ Հովսիսիմենն, գորացած Սուրբ Հոգով, «գազանարար ոգորելով, առնարար մարտնչում էր»: Տրդատը պատվիրում է կանչել Գայաննին, որպեսզի վերջինս հանդի Հովսիսիմենին, որ նա հնազանդվի Տրդատին, սակայն Գայաննն, դիմելով իր սանին, ասում է. «Քաջալերվիր, ամուր կաց»: Տրդատը երբ վերստին փորձում է տիրել Հովսիսիմենին, սրբուհի կույսը, «մարտնչելով նրա հետ օրվա ժամը տասից մինչև գիշերվա առաջին ժամը, հաղթեց թագավորին»: Այնուհետև բացելով արքունի պալատի դռները՝ դուրս է գալիս թաղար, գնում հնձանները՝ հաղթության ավետիսը տանելով մյուս կույսերին: Չայրացած Տրդատն այնուհետև հրամայում է նահատակել Հովսիսիմենին, Գայաննին և մնացյալ 35 կույսերին:



**Խ**ոսրով Մեծը, երբ դավադրաբար սուսերահար է լինում Անակից և նրա եղբորից, մինչ վախճանվելը պատվիրում է ջնջել նրանց ողջ տոհմը: Դայակները կարողանում են փրկել և փախցնել միայն երկու հոգու, որոնցից մեկին տանում են հունաց կողմերը, իսկ մյուսին՝ պարսից: Հունաց կողմը տարված Գրիգորը, մեծանալով և դայակներից իմանալով իր հոր կատարած չարագործությունների մասին, կամովի ծառայության է մտնում Տրդատի մոտ և նրա հետ գալիս Հայաստան:

Հայոց աշխարհի Եկեղյաց գավառի Երիզա բնակավայրում Գրիգորը հրաժարվում է գոհ մատուցել և երկրպագել Անահիտի մեծիանին, որի համար թագավորը նրան նախ փորձում է համոզել, ապա տեսնելով, որ սպառնալիքները ևս չեն ազդում՝ տասներեք տարբեր չարչարանքների է ենթարկում: Իմանալով, որ նա Անակի որդին է՝ հրամայում է նետել Արտաշատի վիրապը: Այս վիրապում Ս. Գրիգորը անցկացնում է տասներեք տարի:

Ս. Հռիփսիմեի նահատակությունից վեց օր անց, երբ Տրդատ թագավորը որոշում է որսի գնալ, ճանապարհին վրա է հասնում

Տիրոջ պատուհասը, և նա մոլեգնելով կառքից վայր է ընկնում և մարդկային կերպարանքից դուրս գալով՝ վայրի խոզի նման սկսում է թավալվել: Պատուհասվում են նաև քաղաքում եղող մարդիկ: Այդ ժամանակ գալիս է Տրդատի Խոսրովիդուխտ քույրը և պատմում իր տեսած տեսիլը, որում իրեն ասվել էր, թե պատուհասվածները չեն բժշկվի, մինչև Արտաշատի վիրապից չհանվի այնտեղ նետված Գրիգորը: Հայոց ավագանին Օտա նախարարին ուղարկում է Արտաշատ՝ վիրապից հանելու Ս. Գրիգորին. «Եվ եկան բերեցին երկայն ու հաստ պարաններ ու իրար կապելով իջեցրին ներքև: Մեծ ձայնով աղաղակեց Օտա նախարարն ու ասաց. «Գրիգոր, ուր որ ես, դուրս եկ, քանզի քո տեր Աստվածը, որին պաշտում էիր, հրամայեց հանել քեզ այդտեղից»: Սա անմիջապես ոտքի կանգնեց, իսկույն շարժեց պարանը ու ամուր բռնեց: Իսկ նրանք, իմանալով, քաշեցին, վեր հանեցին նրան և տեսան, որ նրա մարմինը թխացել էր, ածուխի նման սևացել: Իսկույն հանդերձներ մատուցելով հագցրին նրան և խնդությամբ Արտաշատ քաղաքից առան-գնացին Վաղարշապատ քաղաքը»:

## 2. Ջակոբի

Ս. Գրիգորը  
հանվում է  
Արսաեսի  
վիրապից

Ագաթանգեղոս,  
Պատմություն Հայոց,  
§ 211-219









Տրդատ քազավորը  
 սրով կիսում է  
 բասիլների  
 Գեղոնին  
 քազավորին  
 իր ձիու հետ միասին



Մովսես Խորենացի,  
 Չարոց սպանություն,  
 Գիրք Բ, գլ. 26

**Ն**ախատանում քրիստոնեության պետականորեն ընդունումից հետո, երբ Տրդատ Մեծը գնում է Հոռոմ Կոստանդինոս կայսրին տեսնելու, Պարսից Շապուհ քազավորը Հայաստանի դեմ է գրգռում հյուսիսային ազգերին: Տրդատը վերադառնալով գնում է Գարգարացոց դաշտը և այնտեղ ճակատամարտ տալիս: Երբ երկու կողմերի զորքերն իրար վրա են հարձակվում, Տրդատը մխրճվում է թշնամո բանակի մեջ և այն երկու մասի բաժանում. «Բասիլների քազավորը, չկարողանալով հսկային տեղից շարժել,

ձեռքով քաշելով՝ պարանը իր ձիու լանջին գցեց, քայց չկարողացավ այնքան շուտ մտրակել ձին, որքան որ շուտ հսկան աճապարելով ձախ ձեռքով բռնեց պարանը և սատիկ ուժով ցնցելով՝ դեպի ինքը քաշեց և երկսայրի սրի հաջող հարվածով կտրեց կեղևարավ մարդուն և նրա հետ ձիու պարանոցն ու գլուխը: Բսկ բոլոր զորքերը տեսնելով, թե ինչպես իրենց քազավորն ու զորավոր կազմողը միջակտուր եղավ այնպիսի ահավոր բազուկից, փախուստով դիմեցին»:



Ռուչիանո Չաստ  
Հովիվները  
գնում են  
Ս. Գրիգոր  
Լուսավորչի  
մարմինը

**Գ**րիգոր Լուսավորչի վախճանի մասին Մովսես Խորենացին գրում է. «Իսկ Սուրբ Գրիգորը Մանյա այրում երկար տարիներ աներևութաբար ապրելուց հետո մահվամբ փոխադրվում է հրեշտակների կարգը: Հովիվները, նրան վախճանված գտնելով, նույն տեղում էլ բաղում են՝ առանց գիտենալու, թե ով է»: Խորենացին հոգևոր մի մեծ խորհուրդ է հաղորդում հովիվների կողմից Լուսավորչի մարմինը գտնելուն: Սուրբ Գրիգորին առաքելական հաջորդությանը համարելով Քրիստոսի աշակերտը՝ հովիվների կողմից Լուսավորչի մարմինը գտնելը և անփոփոխ այսպես է ներկայացնում. «Եվ հիրավի վայել էր, որ նրանք (հովիվները),

ովքեր մեր Փրկչի ծննդյան խորհրդին մասնակից եղան, նաև սպասավոր դառնային նրա աշակերտի հուղարկավորությանը»:  
Միջնադարյան մի պատմության մեջ այսպես է նկարագրվում իր վախճանումից մի որոշ ժամանակ անց հովիվների կողմից գտնված Սուրբ Գրիգորը. «Աստծո հրամանով Սուրբ Գրիգորը գտնվեց հովիվների կողմից, ասես կենդանի նստած՝ դեմքով դեպ արևելք, առաքելական աջը խաչանման վեր պարզած պատվական փայտից պատրաստված Սուրբ Սեղանի Աստվածատիպ պատկերին»:

Մովսես Խորենացի,  
Պատմություն,  
Գիրք Բ, գլ. 71



**Տ**րդատ Մեծի վախճանվելուց հետո Աղձնիքի բզեշխ Բակուր իշխանն ապստամբում է և հպատակության համար դիմում Պարսից թագավորին: Երբ գահ է բարձրանում Տրդատի որդի Խոսրով Երկրորդը, նա հայոց թանակի սպարապետությունը թաժանում է չորս մասի և հարավային կողմի սպարապետ նշանակում Մանածիիր Ռշտունուն՝ վերջինիս պատվիրելով վերջ տալ Բակուր բզեշխի անհնազանդությանը: Մանածիիրը, ճնշելով ապստամբությունը և սպանելով Բակուր բզեշխին, նաև սկսում է անգրաբար հալածել նրա իշխանության ներքո եղող երկրամասի ողջ ժողովրդին, որոնց բվում նաև Հակոբ մեծ եպիսկոպոսի ու սարկավազներից: Հակոբը, նրանց հետևից գալով, հորորում է

Մանածիիրին արձակել ուսմիկ գերիներին, քանի որ նրանք անմեղ են, քայց Մանածիիրը չի համաձայնում՝ պատճառ բերելով թագավորին: Հակոբը դիմում է թագավորին, սրա վրա Մանածիիրն ավելի է չարանում և նրա ուր սարկավազներին, որ կալանավորված էին, հրամայում է ծովը նետել: Երբ այս լսում է մեծն Հակոբը, սաստիկ բարկացած վերադառնում է իր տեղը, բարձրանում է մի լեռ և անհիմուն է Մանածիիրին և նրա զավառը: Եվ Աստծու դատաստանը շուտով վրա է հասնում, որովհետև Մանածիիրը տեսակ-տեսակ ցավերով բռնվում է և մեռնում:

Մանածիիր  
Ռշտունին  
գերի է սանում  
Սուրբ Հակոբի ուր  
սարկավազներին

Մովսես Խորենացի,  
Հայոց պատմություն,  
Գիրք Գ, գլ. է







Ջուլիանո Չաստ  
 Դրաստամատը  
 ինքնատղանություն  
 է գործում իր սիրոց՝  
 Հայոց Արեակ  
 քազավորի  
 հեկտորությամբ



**Պ**արսից Շապուի քազավորը, երբ գնում է ճնշելու քուշանների ապստամբությունը, շրջապատման մեջ է ընկնում, և նրան փրկում է Արշակ Երկրորդի հավատարիմ նախարարներից Դրաստամատը, ում Հայոց այրուծիի հետ միասին քուշանների դեմ կռվելու էր տարել Շապուիը: Դրաստամատի այս քաջագործության համար Պարսից քազավորը նրան ասում է. «Խնդրիր դու ինձանից, ինչ որ ուզում ես, քո խնդրածը կտամ, չեմ մերժի»: Այդ ժամանակ դեռևս ողջ էր Շապուիի կողմից խաբուրյամբ կանչված և Անհուշ բերդում բանտված Արշակ Երկրորդը: Չճալած որ Անհուշ բերդում բանտվածների անունն իսկ չէր կարելի տալ, սակայն Դրաստամատը Շապուիից թույլություն է խնդրում՝ գնալ և տեսնել իր քազավորին: Շապուիը նրան պատասխանում է. «Իժևար բան խնդրեցիր, քայց որովհետև մեծ է ինձ ցույց տված ծառայությունը, թող կատարվի խնդրանքդ. գնա՛,

ինչ որ խնդրեցիր, տալիս եմ»:

Դրաստամատը, գնալով Անհուշ բերդը, «իր բնիկ տիրույթ Արշակին արձակեց երկաթե կապանքներից և վզի շղթաների ծանրությունից, նրա գլուխը լվաց, նրան լողացրեց, նրան ազնիվ զգեստներ հագցրեց, սեղան սարքեց նրա համար, նրան քաղմեցրեց, նրա առաջ քազավորաձայնի ընթրիք դրեց, գինի դրեց առաջը, ինչպես քազավորների կարգն էր, նրան զվարթացրեց մխիթարեց և նվագարաններով ուրախացնում էր»: Արշակ քազավորը, այսպես զինովանալով, ասում է. «Վա՛յ ինձ՝ Արշակիս, որտեղից ուր ընկա և ի՞նչ օրի հասա»: Այս ասելով՝ դաճակը խրեց իր սիրտը և իսկույն մեռավ հենց նստած տեղում: Դրաստամատը երբ այս տեսավ, վրա ընկավ, դաճակը քաշեց հանել, նրա մարմնից և իր կողը խրեց: Նա էլ նույնպես նույն ժամի մեռավ»:

Փափստոս Բուզանդ,  
 Պատմություն Հայոց,  
 հինգերորդ դարություն,  
 գլ. է

Ջուլիանո Չաստ

Մնրաս  
Բագրատունին  
խաբանում է  
դավաճան  
Մերուժան  
Արծրունուն



**Ե**րբ Շապուիը խաբեությանը իր մոտ է կանչում և Աննուշ բերդում բանտարկել տալիս Արշակ Բագրատունին, հոռմեացիների օգնությանը գահ է բարձրանում Արշակի որդին Պապը:

Պապի Հայաստան գալու ժամանակ վճռական ճակատամարտը տեղի է ունենում Չիրավի դաշտում: Հայոց զորքը ճակատամարտում հաղթում և փախուստի է մատնում դավաճան և հայրենի հավատն ուրացած Մերուժան Արծրունու՝ Հայաստան առաջնորդած Շապուիի զորաբանակին: «Հայոց Մնրատ սպարապետը աճապարելով հասավ նրա մոտ, նրա հետ եղող զորքե-

րը կոտորեց և Մերուժանին ձեռքակալեց Կոզառուձուի եղեգնուտի ափին: Անբարիչտին կորստի մատնելու համար նա երկաթի շանփորը տաքացնելով «երկու փար բոլորեց պսակի ձևով և շիկացնելով ասաց. «Քեզ պսակում եմ, Մերուժան, որովհետև դու ձգտում էիր Հայոց վրա Բագրատունի, և իմ ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ հայրենի իշխանության կարգով»: Եվ կրակի նման կեծ (շանփորը) դրեց Մերուժանի գլխին, և այսպես այն չարը սատկեց: Այնուհետև երկիրը խաղաղվեց Պապի ձեռքի տակ նվաճվելով»:



Ջուլիանո Չաստ

Վարազդաս  
բազավորն  
սղանում է իր վրա  
հարձակված հինգ  
յոմբարդացիներին



**Պ**ապ բազավորը թեև գահ էր բարձրացել հոռմեացիների օգնությամբ, սակայն վերջիններս, շհանդուրժելով Հայոց բազավորի ինքնուրույն քաղաքականությունը, խաբեությամբ խնջույքի են հրավիրում և դավադրաբար սպանում նրան: Պապից հետո, դարձյալ հոռմեացիների օգնությամբ, գահ է բարձրանում Արշակունյաց տոհմից Վարազդաստ անունով մեկը: Խորենացին նրա մասին գրում է. «Այս Վարազդաստը երիտասարդ էր տարիքով, սրտոտ, հաղթահասակ, ուժեղ, լի արիության բոլոր գործերով և շատ հզոր նետաձգության մեջ: Շապուռից փախչելով նա գնացել էր կայսեր դուռը և այնտեղ քաջ հանդիսացել: Նախ Պիսալուն բռնցքամարտիկներին հաղթելով, հետո հելլադացիների Արեգ քաղաքում կես օրում մի քանի սուլուն կոտորեց, որի համար Ոլիմպի-

ական հանդեսի ընթացմարտների խաղերում փառք վաստակեց և հարգանք»:

Պատմահայրը հատկապես շեշտում է Վարազդաստի մեծամարտը հինգ լանգոսարդների յոմբարդացիների հետ և հաղթելը. «Իսկ այն քաջ և արիական գործերը, որ նա կատարեց դանակ վարտների ազգի դեմ, համարձակվում եմ ասել, թե հավատարմ էին սուրբ Տրդատի (գործերին), որովհետև թշնամիների կողմից հինգ ախոյան հարձակվեցին նրա վրա և նա մեկը մյուսի հետևից բոլորին սրով կոտորեց. և մի բերդի վրա դիմելով, բերդի պատվարի վրա տասնևյոթ մարդ նետով զարնելով՝ իրար վրա ներքև գլորեց, ինչպես շուտ հասունացած թզերը բափվում են սաստիկ մրրիկից»:

Մովսես Խորենացի,  
Հայոց պատմություն,  
Գիրք 9, գլ. Խ

Ջուլիանո Չաստ  
Մուշեղ  
Մամիկոնյանը  
դավադրաբար  
սղանվում է  
խնջույքի ժամանակ



**Վ**արազդատ բազավորը թեև քաջ ու համարձակ էր, սակայն նրիտասարդ լինելով, կյանքի փորձ չունեի, դյուրահավատ էր: Այս հանցամանքից օգտվում է նրա դայակ և ուսուցիչ Բատ Սահառունին: Ցանկանալով տիրանալ Մամիկոնյաններին վերապահված հայոց սպարապետությանը՝ նա բազավորին ասում է, թե սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը դավում է նրան՝ ցանկանալով կամ Հայաստանը ենթարկել հույներին և կամ էլ նրանց օգնությամբ բազավոր դառնալ:

Հավատալով այս չարանենց խոսքերին՝ Վարազդատը որոշում է սպանել նրան: Մի խնջույքի ժամանակ պատվիրում է, որ երբ ինքը ոտքի կանգնի, գան և շրջապատեն Մուշեղին: Երբ քուրճ էլ շատ գինի էին խմել, Վարազդատը վեր է ելնում, և

նրան պատվելու համար ոտքի են կանգնում նաև մյուս նախարարները. «Եվ հանկարծ այն մարդիկ, որոնց հրաման էր տրվել, տասներկու մարդ միանգամից միասին ետևի կողմից Մուշեղին բռնեցին՝ վեց մարդ մի ձեռքից և վեց մարդ մյուս ձեռքից: Երբ բազավորը ոտքի կանգնեց, Մուշեղը նրան նայեց, թե ինչի՞ց է այս, և բազավորը պատասխանեց ու ասաց. «Գնա՛ Պապ բազավորի մոտ, հարցրո՛ւ և կիմանաս, թե ինչից է»: Այս ասելով բազավորը դեպի դուռն ուղղվեց ու դուրս եկավ: Իսկույն Բատ Սահառունին՝ Վարազդատ բազավորի դայակը, ազդրից կախած նրանը հանելով խոցեց Մուշեղ գորավարի շնչափողը և իսկույն գլուխը կտրեց: Նրա մարմինը վերցրին ու տարան նրա գյուղը»:

Փավստոս Բուզանդ,  
Պատմություն Հայոց,  
դպրություն Ե, գլ. ԼԵ



Պարսից  
արխայզն  
Արսաշիրը  
գահրնկեց է անում  
Հայոց Խոսրով Գ  
թագավորին

Մովսես Խորենացի,  
Հայոց պատմություն,  
Գիրք 9, գլ. 8

**Հ**ռոմեա-պարսկական դաշնագրով 386-387թթ. Հայաստանը բաժանվում է Հռոմեական կայսրության և Մասսանյան Պարսկաստանի միջև: Այդ ժամանակ Հայաստանում թագավորող Արշակ Գ Արշակունին փոխադրվում է բյուզանդական ազդեցության մերթո գտնվող մասը, իսկ պարսկական ազդեցության ոլորտում գտնվող բաժնի վրա, որն անհամեմատ մեծ էր, քան բյուզանդականը, Շապուհը թագավորեցնում է Արշակի եղբորը Խոսրով Գ Արշակունուն: Կարճ ժամանակ անց Արշակը վախճանվում է, և Խոսրովն իր ազդեցությունը տարածում է նաև հռոմեական մասի Հայաստանի վրա և նամակ է գրում կայսրին, որ նա էլ իրեն վստահի Հայաստանի հռոմեական մասը և ինքն այդ մասի հարկերն էլ կվճարի Հռոմեական կայսրությանը, և կայսրը համաձայնում է:

Այդ ժամանակ վախճանվում է Հայոց Ասպուրակես կաթողիկոսը, և Խոսրովը նրա տեղը կարգում է Մահակ Պարթևին, որից հետո մի քանի հայ նախարարներ գնում և չարախոսում են Շապուհի մոտ, թե Խոսրովն իրավունք չունեի առանց նրա գիտության Մահակին կաթողիկոսական գահ բարձրացնել և որ Խոսրովը ցանկանում է դաշինք կնքել կայսեր հետ և ենթարկվել նրան: Լսելով այս ամենը Շապուհը պատգամաբերների միջո-

ցով նրան ծանր մեղադրանքներ է ուղղում, սակայն Խոսրովը «խրոխտանալով հանդգնաբար պատասխանեց և պատգամավորներին անարգանքով ետ դարձրեց»: Այնուհետև կայսրի մոտ պատգամաբերներ է ուղարկում, որ նա հրաժարվի Շապուհի հետ կնքած դաշինքից և աջակցի Հայաստանին, կայսրը, սակայն, հրաժարվում է չցանկանալով թշնամանալ Շապուհի հետ:

Որևէ դաշնակից չգտնելով Խոսրովը հարկադրված գնում է Շապուհի որդի՝ արքայազն Արտաշիրի մոտ: Վերջինս, Խոսրովին թագավորությունից զրկելով, թագավոր է կարգում նրա Կուսնապուտի եղբորը, իսկ Խոսրովին շրջալակապ տանում Տիգրան: Հայոց նախարարներից Շապուհը Կամսարականը և Պարզև Ամատունին յոթ հարյուր զինվորով հարձակվում են պարսից զորքի վրա՝ ազատելու Հայոց Խոսրով թագավորին, սակայն չեն կարողանում, քանի որ նրա ուղքերը շրջալված էին: Այս հարձակման ժամանակ զոհվում են Շապուհը Կամսարականը և Պարզև Ամատունու Մանվել որդին, իսկ Պարզևը գերի է ընկնում: Արտաշիրը Խոսրովին բանտարկում է Անհուշ բերդում, իսկ «Պարզևին կալանավորելով տալան Արտաշիրի առաջ, և նա հրամայեց, որ նրանից տիկ հանեն, փչելով ուռեցնեն և Խոսրովի աչքի առաջ դնեն շարունակ»:







Ջուլիանո Չաստ

Ատոմ Մոկացին  
ծաղրում է Շապուհ  
արձայնորդուն

**Խ**որով Գ-ից հետո Հազկերտը ոչ թե Արշակունյաց տոհմից մեկին է Հայոց թագավոր կարգում, այլ իր Շապուհ որդուն: Ինչպես, սակայն, գրում է Խորենացին, «Նա չկարողացավ նախարարների համակրությունը շահել, այլ քոյրը նրան ատեցին և թագավորաբար չէին մեծարում որսի կամ խաղերի ժամանակ»:

Մի անգամ Շապուհը հայ նախարարների հետ որսի է գնում և չի կարողանում արագությամբ սլանալ խորդուրորդ և քարքարոտ տեղերով և ետ է մնում, որի համար Ատոմ Մոկացին պարսավում է նրան: Մի անգամ էլ որսի ժամանակ, երբ եղեգնուտներն այրում են, որպեսզի կինճերը դուրս գան այնտեղից և հնարավոր լինի որսալ, խիտ եղեգների մեջ Շապուհը չի համարձակվում ձին արագ

քշել, և կրակը շրջապատում է նրան: Նա, իր շուրջը նայելով, ձիով այս ու այն կողմ է դառնում: Ատոմ Մոկացին ծաղրում է նրան և ասում, թե ինչո՞ւ է վախենում, չէ՞ որ կրակը նրանց աստվածն է: Մեկ այլ անգամ Շապուհի հետ մականով խաղալիս Շավասպ Արծրունուն հաջողվում է գնդակը երկու անգամ խլել Շապուհից: Սա մականով նրան խփելով ասաց. «Ինքդ քեզ ճանաչիր»: Այդ ժամ Շավասպ Արծրունին նրան պատասխանում է, թե ինքն իր չափը գիտի և որ ինքն էլ թագավորական տոհմից է, ու մեծ քանակությամբ դուրս է ելնում ձիարշավի ասպարեզից:

Այսպես, չորս տարի անարգարար թագավորելուց հետո, Շապուհը հեռանում է Հայաստանից՝ չկարողանալով իրեն ենթարկել կամ ձերբակալել հայ նախարարներին:

Մովսես Խորենացի,  
Հայոց պատմություն,  
Գիրք 9, գլ. 56



H. T. Lofan



**Ս**ահակ Պարթևի այս կյանքից փոխվելուց վեց ամիս անց վախճանվում է նաև Ս. Մեսրոպը: Մաշտոցի աշակերտ և կենսագիր Կորյունն այսպես է ներկայացնում սրբի վախճանվելը. «Հենց միևնույն տարում երանելի Սահակի մահից վեց ամիս անցնելուց հետո, Հայոց բանակը սուրբ վարդապետի հետ միասին գտնվում էր Արարատյան Նոր Քաղաքում (Վաղարշապատում), և միևնույն հոգեկրոն վարքով հասավ սրբի քրիստոսակոչ վախճանը մի քանի օրվա հիվանդությունից հետո, մեծական ամսի տասներեքին: Եվ մինչդեռ սրբի ձեռները կարկառված էին դեպի երկինք, խաչանճան, լուսավոր շողավոր ձևով սքանչելի տեսիլ երևաց այն ապարանքի վրա, ուր վախճանվում էր երանելին. և ամեն մարդ ինքը տեսավ այդ, և ոչ թե ընկերը պատմեց: Եվ նա սրբերին սեր ու միաբանություն ավանդեց, մերձավորներին ու հեռավորներին օրհնությամբ պսակեց և հաճոյական աղոթքը Քրիստոսին հասցնելով հանգավ:

Վահանն ու Հմայակը, աշխարհական բազմության հետ, վերցրին նրան վախճանվածի պատրաստությամբ, սաղմոսներով և օրհնությամբ ու հոգևոր ցնծություններով, վառած կան-

թեղներով ու բորբոքած ջահերով և բուրդ խնկերով, և անբողջ լուսաճաճանչ աշտանակով, և այն լուսավոր առաջախաղաց խաչանշանով, բարձրացան Օշական և այնտեղ մարտիրոսարանի մեջ դրին, օրհնավոր հիշատակը կատարեցին, ապա նշանն աներևույթ եղավ, և նրանք ետ դաձան յուրաքանչյուրն իր տեղը»:

Ս. Մեսրոպի երկրային կյանքից փոխվելը այսպես է ներկայացնում Խորենացին. «Ինչպես լսեցի բազմաթիվ և արժանահավատ անձերից, խաչի ձևով աղոտ լույս էր շողում այն տան վրա, որտեղ երանելին հոգին ավանդեց. և շուտով չանհետացավ այս շողքը, քչերին տեսանելի չեղավ, այլ բոլոր բազմությանը, այնպես որ շատ անհավատներ մկրտվեցին»:

Հուղարկավորության մասին էլ գրում է, որ Վահան Ամատունին սուրբ Մեսրոպի «մարմինը վերցրեց և արժանավայել հուղարկավորությամբ տարավ իր գյուղը՝ Օշական: Եվ նույն լուսեղեն խաչի երևույթը դազաղի վրա գնում էր դեմ հանդիման բոլոր ժողովրդին, մինչև նրան հողին հանձնեցին Վահանը և նրա սպասավոր Թաթիկը, որից հետո նշանն աներևույթ եղավ»:

Կորյուն,  
Վարդ Մաշտոցի,  
գլ. ԻԷ

Մովսես Խորենացի,  
Հայոց պատմություն,  
Գիրք 9, գլ. 4Է







Ջուլիանո Չասո  
Արամի  
Կամսարականը  
դիմում է  
Վարդան  
Մամիկոնյանին  
ես դառնալ  
դեղ Հայոց աշխարհի

**Պ**արսից Հազկերտ Երկրորդը, երբ հայոց նախարարներին Տիգրոն է կանչում և մահվան սպառնալիքով պարտադրում գրադաշտականություն ընդունել, հայոց նախարարներն առերես ուրանում են, որպեսզի իրենց կորստյամբ Հայոց աշխարհը անտերություն չմատնվի:

Այս ամենը տեսնելով՝ Վարդան Մամիկոնյանը որոշում է Մամիկոնյան տոհմի հետ բողոքել իրենց տիրույթները և գնալ բյուզանդական տիրապետության ներքո ապրել՝ ուրացումից փրկելու համար իրենց անձերը: Հայոց մնացյալ նախարարները, երբ իմանում են այս մասին, շփոթահար են լինում՝ մտածելով, որ առանց Մամիկոնյան տան իրենք այլևս ի գորու չեն լինի դիմագրավելու Հազկերտին:

Ահա այս պատճառով հայոց ավագանին իր հավատարմու-

բյունը հավաստող կնքված մի նամակ և ուխտի այն Ավետարանը, որի վրա հայոց նախարարները երդվել էին չդավաճանել իրենց հավատին, Առնդ, Երեմիա ու Խորեն երեցների և Արշավիր Կամսարականի, Հմայակ Գիմարսյանի և Արեղենից Գազրիկ իշխանի հետ ուղարկում են Վարդան Մամիկոնյանի մոտ: Հայոց սպարապետին և նրա եղբայրներին նրանք ասում են, թե դուք հեռանում եք ձեր հողին կորստյան չմատնելու համար՝ մնացյալին բողոքելով, որ մատնվեն հավիտենական կորստի՞: Վարդան Մամիկոնյանը համոզվելով, որ հայոց նախարարներն ու ավագանին իրապես պատրաստվում են մոզերին Հայաստանից դուրս քշելուն և հաստատուն են իրենց հավատում, ետ է վերադառնում և սկսում դեկավարել ապստամբության կազմակերպման գործը:

Ղազար Փարսեցի,  
Հայոց պատմություն,  
Դրվագ Բ, գլ. Է



Ջուլիանո Չաստ

Արշավի  
Կամսարականը և  
Մուշե Դիմասյանը  
մարտնչում են  
բանձրախոր  
ճահճոտում

**Ե**րբ հայոց ուխտապահ նախարարներն ավերում են կրակարանները և քշում մոզերին, լուր է գալիս, որ Արյաց հագարապետ Միհրներսեհը եկել է մեծ գորքով և պատրաստվում է Աղվանքի վրայով հարձակվել Հայաստանի վրա: Եկող այս գործարանակին ընդառաջ է գնում Վարդան Մամիկոնյանը: Պարսից գորքն անցնում է Կուր գետը և բանակում Աղվանից աշխարհի Խաղխաղ գյուղի մոտ, որտեղ էլ տեղի է ունենում ճակատամարտը:

Վարդան Մամիկոնյանն այ քեի հրամանատար է կարգում Արշավի Կամսարականին, ծախ քեի հրամանատար՝ Խորեն Խորխոռունուն՝ նրան օգնական նշանակելով Հմայակ Դիմասյանին, իսկ կենտրոնից պատրաստվում է ինքը հարձակվելու: Այս ճակատամարտում իրենց քաջությանը ու անձնագոր-

ծությանը առանձնանում են հատկապես Արշավի Կամսարականը և Մուշե Դիմասյանը: Դազար Փարպեցին գրում է, «Բոլորից առաջ մարտի վայրը գնացին Արշավի Կամսարականն ու Դիմասյանից սեպուռի Մուշեն, որոնք տեղի անձանորությունից հանդիպեցին սաստիկ բանձրախոր ճահճոտի: Արշավի Կամսարականն ու Մուշեն տիղմի մեջ ընկան երիվարներով ու խրվեցին: Այնտեղ նահատակությանը պսակվեց երանելի սեպուռի Մուշե Դիմասյանը: Իսկ Արշավի Կամսարականը, իջնելով երիվարից, սպանեց Լիմաց բազավորի եղբայր Վուրկին և իր ձին դուրս քաշելով սաստիկ խոր տիղմից, երիվարը ցամաք հանելով, անվեհեր ու քաջաբար քոչնի պես բռավ երիվարի վրա և սարսափեցնելով իր քեի բշնամիներին՝ փախուստի մատնեց»:

Դազար Փարպեցի,  
Չայոց պատմություն,  
Դրվագ Բ, գլ. է



**Վ**արդան Մամիկոնյանի ավագ դուստր Շուշանիկն ամուսնացել էր վրաց Վազգեն իշխանի հետ, որն այդ ժամանակ Գուգարաց քղեշխն էր: Նրանք ունեին չորս զավակ՝ երեք տղա և մեկ աղջիկ:

Վազգենը պարսից արքունիքի հաճությամբ ստանալու համար ուրանում է քրիստոնեությունը և կրակապաշտ դառնում: Իմանալով այդ մասին՝ Շուշանիկը վերցնում է երեխաներին և սկզբում պատասպարվում եկեղեցում, այնուհետև մի հյուղակում: Վազգենը հրամայում է քանտարկել նրան, ապա որպես պատգամաբերներ նրա մոտ է ուղարկում արքունի եպիսկոպոսին և իր եղբայր ու մեծ իշխան Ջոջիկին, որ նա ուրանա իր հավատը: Շուշանիկը հրաժարվում է ուրանալ, ետ է ուղարկում իր տիկնության նշանները և

զարդերը, որից զայրացած Վազգենը դաժանորեն ծեծում ու անարգում է Շուշանիկին, որից հետո նույնպիսի շղթայով շղթայում ոտքերը, ձեռքերը և պարանոցը:

Այս շղթաների մեջ Շուշանիկն ապրում է վեց տարի և յոթերորդ տարում չարչարանքներից լիովին հյուծված՝ ծանր հիվանդանում: Մինչ Շուշանիկի վախճանվելը նրան տեսնելու են գալիս Վազգենի Ջոջիկ եղբայրը կնոջ հետ, իր դրան երեցը, Յուրտավի արքեպիսկոպոսը, Մժիսեթի վրաց եպիսկոպոսապետը, հայ և վրաց իշխանները: Վախճանվելուց առաջ նա խնդրում է, որ իրեն քաղեն այն խցում, ուր ինքն առաջին անգամ առանձնացավ Վազգենի ուրանալուց հետո: Շուշանիկը նահատակվել է 475թ., երբ մոտ 60 տարեկան էր:





**Ա**վարայրի ճակատամարտից հետո Հայաստանում շարունակվեցին ժողովրդական ընդվզումները, որոնք 481-84թթ. վերածվում են կազմակերպված ապստամբության, որը գլխավորում է Վահան Մամիկոնյանը: Երեք տարի շարունակ հայկական ուժերը համառ դիմադրություն են ցույց տալիս՝ մի քանի ճակատամարտերում տանելով մահ փայլուն հաղթանակներ: Պարսիկները Վահանին առաջարկում են գալ սահմանամերձ Հեր գավառի Նվարսակ գյուղը բանակցելու: Վահանն ընդունում է հրավերը, և 484թ. Նվարսակում կնքված պայմանագրով հայերն ստանում են հավատի լիակատար ազատություն և վարչական ներքին ինքնավարություն:

Նվարսակի հաշտությունից հետո Վահան Մամիկոնյանը մեծ պատիվներով վերադառնում է Հայաստան, ապա գնում հանդի-

պելու Վաղարշ Բագավորին, որը Վահան Մամիկոնյանին շնորհում է հայոց զորքի սպարապետությունը: Վահան Մամիկոնյանի և հայ նախարարների վերադարձը Հայոց աշխարհ այսպես է ներկայացնում Ղազար Փարպեցին. «Եվ հայոց զորավար ու Մամիկոնեից տեր Վահան Մամիկոնյանը, հայոց ուխտապահ նախարարներով հանդերձ, եկավ, հասավ Հայոց աշխարհը: Նրանց ընդառաջ ելավ Հայոց սուրբ կաթողիկոս Հովհանն՝ խաչի պատվական նշանով և ճգնակյաց նահատակ Գրիգորի սուրբ նշխարներով, որոնցով էլ նրանց բոլորին ճանապարհել էր դեպի արքունիք: Եվ սուրբ Հովհան կաթողիկոսը, հանդիպելով հայոց զորավար ու Մամիկոնեից տեր Վահան Մամիկոնյանին, նրա հետ եղած մյուս նախարարներին ու զորքերի անբողջ բազմությանը, ողջունեց նրանց օրհնության համբույրով»:

Ջուլիանո Չաստ

Վահան

Մամիկոնյանի և  
հայ նախարարների  
վերադարձը  
հայրենիք

Ղազար Փարպեցի,  
Հայոց պատմություն,  
Դրվագ 9, գլ. ԴԷ







Ջուլիանո Չաստ  
Վարդապետի կին  
Մարիանը  
դասվում է Սուրբ  
Կարապետի վանքի  
օրենքը խախտելու  
համար



**Հ**այոց աշխարհի հնագույն և նվիրական սրբավայրերից Մշո Սուրբ Կարապետ վանքը քանի որ նվիրված էր Հովհաննես Մկրտչին, ինչպես նաև Քրիստոսի կարապետի մահվան պատճառը կին էր, ուստի արգելված էր, որ նրա անունը կրող և մասունքներն ամփոփող եկեղեցին կին մտներ:

Այս կարգը խախտվել է մի քանի անգամ: Արժրունյաց Վարդապատրիկ իշխանը, որը բազմաթիվ եկեղեցիներ էր կառուցել, ուներ Մարիամ անունով մի կին, որն իր նորածին երեխայի հետ ուխտի է գնում Ս. Կարապետ, բազում աղաչանքներով խնդրում սպասավորներին, որպեսզի թույլ տան մտնի եկեղեցին: Սպասավորները, սակայն, «արգելում էին նրան իր այդ փափագը կատարելու: Բայց վերցնում են մանկանը տիկնոջ գրկից և տանում

են եկեղեցի. տիրոջ սուրբ սեղանի առջև երկրպագեցնում է նրան, ապա բերում տալիս են տիկնոջը»: Մակայն նա ցանկանում է, որ ինքը ևս անձամբ մտնի այն եկեղեցին, ուր Ս. Կարապետի մասունքներն էին: Վանահորից երբ մերժում է ստանում, առանց թույլտվության ներս է մտնում եկեղեցի, խոնարհվում Սուրբ Սեղանի առջև և ուրախ սրտով դուրս գալիս:

Տեսնելով այս արարքը՝ վանքի կրոնավորները զարմացած իրար ասում են, մի՞թե անպատժելի է մնալու այս կինը: Եվ երբ տիկինը շատ չէր հեռացել, գառիվայրի վրա նրան տեսիլ է երևում. «Այր մի գիսավոր եկեղեցուց դուրս եկավ և անպերի մեջ որոտալով դեպի նա է գալիս ու սրով հարվածում նրան, և այնտեղ նա հոգին ավանդեց»:



**Ջուլիանո Չաստ**

**Ստեփանոս Մյունեցու  
նահասակությունը  
Մոզ ավանում**

**Ս**տեփանոս Մյունեցին (660/670թթ.-735թ.) հայ մշակույթի նշանավոր գործիչներից է: Մովորել է Կ. Պոլսում և Արենքում, դասավանդել Գվինի կաթողիկոսարանի դպրոցում, գրադվել մատենագրական գործունեությամբ:

Մյունյաց աշխարհի Եղեգյաց գավառի (Եղեգնաձոր) Մոզ ավանում բնակվում էր մի անբարո կին, որին հանդիմանելն էլ պատճառ է դառնում նշանավոր այս եկեղեցականի ու մատենագրի եղերական վախճանին: Ինչպես գրում է Մյունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, «Երախտապառ նրան մինչ այդ երեք անգամ զգուշացրել էր ըստ Տիրոջ հրամանի, բայց նա չէր զղջացել: Այդ պատճառով այս անգամ սուրբը սաստիկ գայրանում է և մեծ պատժի վճիռ կայացնում: Մի անգամ սաստիկ շոգի պատճառով ինքը դուրս է գալիս գյուղից ու գնում Ավագ ակն կոչված քաղցրահամ աղբյուրի ակունքում զովանալու: Կարգադրում է իր վրա-

նը խիել, ինքն էլ հանգստանալու մահիճը դնում է մի ուտենու վրա: Եվ առանձին եկնելով ու երկար ժամանակ աղոթելով՝ ննջում է այնտեղ: Իսկ հերարձակ կինը հետը վերցնում է իր սիրեկանին, գալիս է սպանելու սրբին, որ իրենք համարձակ գործեն: Մոտենալով ծառին՝ սիրեկանին բարձրացնում է վեր, սուրը տալիս ձեռքը, որ սրբին սպանի: Մարդը բարձրանալով տեսնում է, որ սուրբը քնած է, մի հրեշտակ էլ, կանգնած նրա գլխավերևում, քեկրով հով էր անում: Այդ տեսնելով՝ մարդը կարկամում է, բուլանում, մեռածի նման ընկնում է ծառից: Ապա կինը, մարդուն տեսնելով խիստ պատուհասի մեջ ընկած, զղջալու փոխարեն առավել ևս շարանում է և, սատանայից հրահրված, վերցնում մերկացած սուրբ ու բարձրանում ծառը, սուրը խրելով սրբի կոկորդը՝ անքիժ արյունը վարում է փայտե մահճի վրա, ինչպես իր Տիրոջ (Հիսուսի) արյունը մահվան փայտեղեն տարբի (խաչափայտի) վրա»:

Ստեփանոս Օրբելյան,  
Մյունիքի պատմություն,  
գլ. ԼԱ



**Մ**յունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանը (1250-ական թթ.-1305թ.) գրում է 10-րդ դարում կատարված մի հրաշքի մասին. «Աղվանքի գահերեց իշխան Վարազ Տրդատը մի դուստր ուներ՝ Շահանդուխտ անունով: Նրա կերպարանքն արտասովոր էր ու հրաշալի. չքնաղ գեղեցկությունը զարմանք էր պատճառում տեսնողներին: Նրան հարս խնդրեցին Թորգոմյան տնից: Եվ նա դուրս ելավ իր աշխարհից, հայրենի տնից, գնաց կին դառնալու հայ իշխանին: Մտնելով Բաղաս աշխարհը՝ անցնում էր ապահով տեղանքի ճանապարհով, մի ապառաժոտ վայրով, որտեղ մի քարածայռի փլվածք էր՝ առեկի խորությամբ, որն անդունդի նման ուղղված էր դեպի Տաթևի մեծ հայրապետանոցի կողմը: Հենց այնտեղ բաքնված, ծվարած էին սուսերամերկ գորքի լեզեռնախումբ ջուկատներ, որոնք Շահանդուխտի սրանչևի գեղեցկության համար եկել էին Պարսկաստանից, հսկում էին ճանապարհների անցքերն ու կիրճերը, որ հափշտակեն այդ աղջկան:

Ջինված խմբերը հանկարծակի հարձակվեցին նրանց վրա և սրերը քաշած սկսեցին անխնա կոտորել [այս] քրիստոնյաներին: Ապա խորահավատ օրիորդը, այս տեսնելով, հասկացավ

պատճառը և, տերունական խաչով երեսին խաչ հանելով, ձին մտրակեց ու թռավ քարածայռի փլվածքը»: Ինչպես ինքն է գրում հետագայում, «Քանու ուժգին հոսանքով, ամերևույթ զորությամբ, կարծես թե կառքով իջա այս ձորի խորխորատը, ձիս էլ հետս՝ անվնաս»: Այսպիսի հրաշքով ազատվելուց հետո նա այլևս չի ցանկացել հարսնանալ, այդ լեռան լանջին կառուցել է մատուռ և այնտեղ ճգնել, իսկ իր կալվածքները նվիրել է Տաթևի վանքին և աղբատներին:

Այն տեղը, որտեղից իրեն ձիով դեպ ձորն է նետել Շահանդուխտը, ժողովուրդը անվանել է «Շահանդուխտի ժայռ»: Ինչպես Լալայանն է նկարագրում, Տաթևի հարավային կողմում երեք գագաթներ ուղղահայաց լանջերով իջնում են Որոտան գետի ափը. այս երեքի կենտրոնում եղողը կոչվում է Շահանդուխտի ժայռ, որն անվանվել է նաև Հարսնաքար:

Այս ժայռի գագաթի մոտից մի փոքրիկ ձորակ է բացվում, ուր կարմիր քարից մի փոքրիկ մատուռ կա պատրաստված: Կարմիր կիրակիին, որը Մեծ Պահքին հաջորդող երրորդ կիրակին է, նորահարսները այստեղ, ի հիշատակ Շահանդուխտ կույսի, ուխտի են գալիս, որպեսզի երեխաները ծաղիկով չհիվանդանան:





Ջուլիանո Չասո

Կարմրակելը

հաղթում է

Մամլանի զորին

և գերի վերցնում

նրա կնոջը

**Մ**ամլան ամիրան 985թ. մեծաթիվ զորքով գալիս է Հայոց աշխարհի վրա ու գերելով և ավերելով եկեղեցիները՝ հասնում է Դավիթ Կյուրապաղատի իշխանության սահմաններում գտնվող Ապահունյաց գավառը: Դավիթ Կյուրապաղատը Բագրատունյաց տոհմից էր, Տայրի և Կղարջիքի իշխանը: Դավթին ուղղված իր պահանջ-նամակում ասում է, եթե քո տիրույթների տասը տարվա հարկը և քո ազատների որդիներին ինձ ծառայության չտաս, ապա կարշավեմ քո երկրի վրա, և ոչ ոք չի կարողանա փրկել քեզ: Դավթին ինքն ընդառաջ է գնում Մամլանին: Հայոց և վրաց զորքերի հետ միասին հասնելով Ապահունիքի սահմանին՝ «անվեհեր Կարմրակելին յոթ հարյուր ձիավորով գիշերապահ նշանակելով, ինքը ողջ գիշերն անցկացրեց Աստծուն աղոթելով»:

Առավոտյան կողմ Կարմրակելի զորաջոկատին է մոտենում

Մամլանի զորքի գիշերապահ զորաջոկատը: Երեկոյան սկսվում է մարտը երկու զորաջոկատների միջև: Մարտից առաջ անձրև էր եկել, և խոտին իջած անձրևի ցողն սկսում է փայլել լուսնի լույսի ներքո, և շրջակա լեռներն սկսում են փայլատակել հրեղեն բոցի նման: Մամլանի զինվորները, տեսնելով այդ փայլը, կարծում են, թե քրիստոնյաների զորքերի բազմությունն է, և ահաբեկված փախուստի են դիմում: «Կարմրակելը, տեսնելով նրանց փախուստը, սրով հարձակվեց նրանց վրա և, ինչպես մայրի անտառ կտրես, սկսեց անխնա կոտորել: Նա բռնեց Մամլանի կնոջն ու նրա պատերազմական ձին և ուղարկեց Դավթին: Վերջինիս ավետիս րեբեցին, թե ջարդեցինք Մամլանին: Դավթը, լսելով այդ լուրը, ապշեց: Այնուհետև ողջ զորքը հետապնդեց անհավատների զորքին և մեծ ջարդ տալով՝ փախուստի մատնեց, վերցրեց անթիվ-անհամար գերիներ ու ավար՝ ոսկի և արծաթ»:

Մատթոս Ուտայեցի,  
Ժամանակագրություն,  
Մասն առաջին







**Ջուլիանո Չաստ**

**Սմբատ Ա  
Բագրատունին  
մխիթարում է  
Դվինի երկրաւարժի  
աղետյալներին**

Չովհաննես  
Դրասխանակերտցի,  
Չայոց պատմություն



**Ա**րուաշատից և Վաղարշապատից հետո հինգերորդ դարի կեսերից մինչև IX դարի վերջը Հայաստանի քաղաքական կենտրոնն է դառնում Դվինը:

Դվինը, սակայն, քանիցս կրել է երկրաշարժի ծանր հարվածները, որոնցից ավերիչ էր հատկապես 893թ. երկրաշարժը, որը տեղի է ունենում Սմբատ Ա Բագրատունու (թգվ. 890-914թթ.) քաղաքավորության շրջանում: Այն հարվածում է գիշերը՝ ավերելով քաղաքի պարիսպները, ապարանքները և մնացյալ տները: Ավերվում են նաև կաթողիկոսարանը և քաղաքի եկեղեցիները: Երկրաշարժը խլում է նաև մեծ թվով մարդկային կյանքեր: Ինչ-

պես պատմիչն է գրում. «Մարդկանց մեծ քաղնություններ, մնալով շինությունների հարկերի տակ, շնչապատ են լինում՝ հողի մեջ քավալվելով և հողի տակ խեղդվելով», իսկ գոհվածների հարազատների «ողբի ձայնը մինչև երկինք է հասնում»:

Երկրաշարժից հետո Դվին է գալիս Սմբատ Ա քաղաքավորը ու մխիթարական խոսքերով սփոփում քաղաքի ողջ մնացած բնակիչներին՝ քաջալերելով նրանց, որ ձեռնամուխ լինեն քաղաքի վերաշինմանը: Հայոց քաղաքավորը արքունի ծախսերով օգնում է, որ վերականգնվեն քաղաքի եկեղեցիները, ապարանքները և բնակելի շինությունները:





Ջուլիանո Չաստ  
Արաս  
Բագրատունին  
փորել է սալիս  
Բեր բագավորի  
աչխը



Ստեփանոս Ասողիկ,  
Ընդհանրական  
պատմություն

**Ա**շոտ Երկաթից հետո բագավորում է նրա եղբայր Արաս Բագրատունին (թզվ. 928-953թթ.): Նրա բագավորության տարիներին՝ 937թ. սկսվում և 943թ. ավարտվում է Կարսի Կարուղիկեի կառուցումը, որից հետո արխագների Բեր բագավորն սպառնում է Հայոց բագավորին, որ Կարսի եկեղեցին օժվի ոչ թե հայկական, այլ քաղկեդոնական ծեսով: Նա զորքով գալիս է Կուր գետի ափը, ուր նրան ընդառաջ է ելնում Արաս բագավորը՝ հայոց զորքով: Բերի զորքերն սկսում են ասպատակել շրջակայքը: Մի անգամ նրանք նույնիսկ գետն են անցնում և մոտենում հայոց բանակին այնքան, որ Արաս բագավորը լսում է նրանց ձայները: Այդ-ժամ Հայոց արքան հեծնում է ձին, երկսայր սուրը ձեռքն առնում և

սկսում հալածել գետն անցած զորքին: Անգամ գետի մեջ է շարունակում սրախողխող անել նրանց: Հայոց զորքը, հետևելով իր բագավորին, անցնում է գետը, մտնում Բերի բանակատեղին: Գերի ընկած Բերը տարվում է Կարս: Այստեղ Արաս բագավորը կապված ձեռքերով Բերին ներս է տանում Կարսի նորակառույց Կարուղիկեն և նրան ասում. «Մի աս է Տիրոջ տաճարը, որը ցանկանում էիր օրհնել: Արդ, այժմ բաց աչքերով տես նրա վայելուչ գեղեցկությունը, քանի որ այլևս չես կարող տեսնել»: Եվ դուրս հանելով եկեղեցուց՝ պատվիրում է կուրացնել նրան: Կուրացված Բերին փրկագնում են արխագները և խաղաղության ուխտ հաստատում Հայաստանի հետ, որ էլ պատերազմ չլինի երկու երկրների միջև:

**Ջուլիանո Չաստ  
Հայերը Անին  
դաճարող  
բյուզանդական  
գորհերին  
փախուսի են  
մասնում**



**Բ**ագրատունյաց Գագիկ Ա բագավորի (թգվ. 989-1020թթ.) վախճանվելուց հետո գահը ժառանգում է նրա որդի Հովհաննես-Սմբատը, որը վախճանալով, քի բյուզանդական բանակը կարող է գրավել Բագրատունյաց բագավորությունը, Անին կտակում է Բյուզանդական կայսրությանը՝ ցանկանալով ժամանակ շահել և այդպես երկիրը պաշտպանել արտաքին վտանգից:

1041թ., երբ վախճանվում է Հովհաննես-Սմբատը, Մանուել կայսրը 100 հազար զինվորից կազմված մի զորաբանակ է ուղարկում, որպեսզի, համաձայն հիշյալ կտակի, կայսրությունը տիրանա Անիին: Բյուզանդական զորաբանակը, սակայն, ծանր պարտություն է կրում Անիի պարիսպների տակ և նահանջում: Այս հաղթանակից հետո հայ իշխանները Բագրատունյաց գահին են նստեցնում Հովհաննես-Սմբատի եղբոր Աշոտի 18-ամյա որդուն՝ Գագիկին, որը 1042թ. բագավոր է օձվում:

Նույն թվականին բյուզանդական գահին է նստում Կոստանդին Մոնոմախը, որը որոշում է ամեն գնով տիրանալ Անիին: Կայսրը 1044թ. երկիցս բյուզանդական զորաբանակ է ուղարկում Անին գրավելու, սակայն բյուզանդական բանակի այս երկու արշավանքներն էլ ավարտվում են պարտությամբ: Այդժամ Մոնոմախը խաբեությանը Գագիկին կանչում է Կոստանդնուպոլիս և այլևս բույլ չի տալիս վերադառնալ Անի: Տեսնելով, որ Գագիկն այլևս չի կարող վերադառնալ և անիմաստ համարելով շարունակական դիմադրությունը՝ հայոց ավագանին ստիպված քաղաքը հանձնում է բյուզանդացիներին: Ինչպես գրում է Մատթեոս Ուռհայեցին, «Երբ քաղաքի [բնակչությունը] ու ողջ զորքը ճարահատյալ համաձայնեցին, այն ժամանակ նամակ գրեցին հոռոմոց գորահրամանատար Պատակամանուսին և, երդումով նրան Անի քաղաքը հրավիրելով, Անի քաղաքը հանձնեցին հոռոմների ձեռքը: Խարխլվեց ու փուլ եկավ Բագրատունյաց տոհմի տերությունը»:

Մատթեոս Ուռհայեցի,  
Ժամանակագրություն,  
Մասն առաջին



## Ջուլիանո Չաստ

Քաջն Թաբուլ  
Վանանդեցին  
բռնակալ  
Տուղրիլի առջև



**Ս**ելջուկները 1047թ., Տուղրիլ բեկի գլխավորությամբ, որը 1055թ. հռչակվում է սուլթան, արշավում են Հայաստանի վրա: Տուղրիլը, ավերելով Հայաստանի մի զգալի մասը, 1054թ. կազմակերպված դիմադրության է հանդիպում Մանազկերտում և Վանանդ գավառում:

Վանանդի սահմանների մոտ նրան ընդառաջ է ելնում Կարսի բազավոր Գագիկ Արասյանը (թգվ. 1029-1065թթ.): Տեղի ունեցած ճակատամարտի մասին Արիստակես Լաստիվերցին գրում է. «Բայց անօրհնների վրա հասած գործերը շրջապատեցին նրանց և որովհետև պատերազմի երկարելու պատճառով ու այն սարսափելի կոտորածից թե՛ իրենք և թե՛ իրենց ձիերը ուժից ընկել էին, չկարողացան պատռել թշնամու պատնեշը և դուրս գալ անօրհնները, սուրբ գործի դնելով, կոտորեցին ազատներից երեսուն մարդ»:

Գագիկ Արասյանի գորավարներից իր քաջությամբ և համարձակությամբ հռչակված Թաբուլ Վանանդեցու մասին Արիստակես Լաստիվերցին գրում է. «Ազատներից մեկին, որի անունը Թաբուլ էր և որը քաջ ու պատերազմասեր մարդ էր, բռնելով սուլթան սուլթանի մոտ: Որովհետև պարսից Արսուրան ամիրայի որդուն Թաբուլը կարեվեր վիրավորել էր, սուլթանը, նրան տեսնելով, ասաց. «Եթե դա ապրի, քեզ կազատեմ, քայց եթե մեռնի, կըրանայեմ, որ քեզ դրան մատաղ անեն»: Իսկ Թաբուլը պատասխանեց. «Եթե իմ զարկածն է, չի ապրի, իսկ թե ուրիշինն է, չպիտեմ»: Քիչ օրերից հետո նա մեռավ: Երբ սուլթանն այդ տեսեց հրամայեց Թաբուլին սպանել և նրա աջ բազուկը կտրելով՝ դարկեց Արսուրանին որպես մխիթարություն, թե քո որդին կառաքելից չի մեռել»:

Ջուլիանո Չաստ  
Թորոս Ա իշխանը  
Մանղալեի  
որդիներից լուծում է  
Գագիկ Բ Հայոց  
արքայի  
ստրանության վրեժը



**Թ**որոս Ա իշխանը (իշխ. 1100-1129թթ.), որը 1104թ. պարտության մատնելով բյուզանդական զորքերին՝ ազատագրել էր Միս և Անարզարա քաղաքները, 1111 կամ 1113թ. բռնում և մահապատժի է ենթարկում հույն իշխան Մանղալեի երեք որդիներին, որոնք նենգաբար սպանել էին Բագրատունյաց վերջին թագավոր Գագիկ Բ-ին: Մատթեոս Ուտայեցին գրում է, թե «գրավելով Կոնդոսկավիս բերդը՝ Թորոսը Մանղալեի որդիներին ատում է. «Ինձ բերեք հայոց թագավոր Գագիկի սուրբ և հանդերձները»: Նրանք բերեցին: Թորոսը, տեսնելով դրանք, դառնազին արտասպնեց: Լաց եղան և բոլոր զինվորները: Թո-

րոսն այնուհետև հրամայեց ցույց տալ իրենց գանձերը, թայց նրանք համառությամբ ցույց չէին տալիս: Այնուհետև Թորոսը զայրամալով՝ երկաթե մի մահակ վերցրեց և, հարձակվելով նրանցից մեկի վրա, ասաց. «Ո՞վ էիք դուք, որ հզոր մարդուն՝ Հայոց օձյալ թագավորին սպանեցիք կամ ի՞նչ պատասխան տվեցիք հայ ժողովրդին», և սկսեց հարվածել նրան, մինչև որ դառն մահվամբ սատակեց: Այնուհետև նա գոհությամբ հայտնեց Աստծուն, որ իրեն արժանացրեց Հայոց արքա Գագիկի արյան վրեժն առնելու. Թորոսի հոր հայրը՝ Ռուբենը, Գագիկի զինվորներից էր»:

Մատթեոս Ուտայեցի,  
ժամանակագրություն,  
Մասն առաջին




Թորոս Բ-ն գերի  
ընկած հույն  
իշխանների  
ազատության  
փրկագինն է  
որոշում

**Բ**յուզանդական Կիո Մանուել կայսրը, լսելով, որ Թորոսը վերատիրացել է հայրական իշխանությանը, Անդրոնիկոս Կոմնենոս զորավարին 12 հազարանոց զորաբանակով 1152թ. ուղարկում է Կիլիկիան գրավելու: Բյուզանդական զորքերը պաշարում են Մամեստիա բերդը, որտեղ ամրացել էր Թորոսը: Ժամանակի պատճառներից Մատթեոս Ուռիայեցին գրում է, թե «Քաջ Թորոսը գիշերով քանդեց Մսիս քաղաքի պարիսպը և արևի ծագելու հետ միասին, առնելով իր զինվորներին, նրանց դեմ պատերազմի դուրս եկավ, քախվեց նրանց և, հաղթանակ տանելով, բոլորին տասներկու հազար հոգու փախուստի մատնեց: Նենգ (Անդրոնիկոսը) փախավ գնաց հունաց կայսեր մոտ և հայ զինվորների դեմ մեծ բողոք

ներկայացրեց: Իսկ մեծ Թեոդորոսը, առնելով ձերբակալված իշխաններին և մյուս գերիներին, անհամար ոսկով ու արծաթով, բազմաթիվ ու բազմապիսի ավարով և հունաց զորքի ձեռքից խլած ոսգմավարով, բազմաթիվ ձիերով և ջորիներով խաղաղությամբ մտավ իր քաղաքը»: Իմանալով այս մասին՝ կայսրը դեսպաններ է ուղարկում Թորոսի մոտ և մեծ փրկագին վճարելով, ազատում գերիներին: Թորոսը իշխանների ներկայությամբ կանչում է իր հետևակազորին և ողջ ոսկին բաժանում նրանց: Երբ դեսպանները զարմացած հարցնում են, թե ինչո՞ւ ողջ ոսկին բաժանեց զինվորներին, Թորոսը պատասխանում է. «Որպեսզի հաջորդ անգամ ևս ձեր զորավարներին ու իշխաններին բռնեն և ինձ մոտ քերեն»:

Մատթեոս Ուռիայեցի,  
Ժամանակագրություն,  
մասն երրորդ





**Լ**ևոն Առաջինը կամ Մեծագործը, ինչպես որ նա անվանվում է իր գործունեության և հայոց պետականությունը վերականգնելու համար, Կիլիկիայի հայկական պետության իշխան է դառնում 1187 թվականից, հաջորդելով իր եղբորը՝ Ռուբեն Գ-ին:

1196թ. Լևոնին միաժամանակ թագ են ուղարկում թե՛ Գերսահայի Հենրիկոս IV կայսրը և թե՛ բյուզանդական Ալեքսոս III Անգելոս կայսրը: Լևոնի թագադրության հանդեսը տեղի է ունենում 1198թ. հունվարի վեցին՝ Աստվածահայտնության տոնին, Տարսոնի Սուրբ Սոֆիա Մայր տաճարում, տարբեր տերությունների աշխարհիկ ու հոգևոր ներկայացուցիչների մասնակցությամբ, որի ժամանակ Գրիգոր Չ Ապիրատ կաթողիկոսը՝ հայկական, իսկ Հռոմի պապի և գերմանական կայսրի ներկայացուցիչ Մայնցի արքեպիսկոպոս Կոնրադ Վիտելրախը լատին ծեսով Լևոնին օծում են «թագաւոր ամենայն Հայոց և նահանգին Կիլիկեացոց և Իսավոփոյ»:

Լևոնի թագադրության հանդիսությունները, ինչպես գրում են հայ և միջնադարյան հեղինակները, տևում են ութ օր: Լևոնի թա-

գադրության հանդեսի մասին Կիրակոս Գանձակեցի (1200/20-1271թթ.) պատմիչը գրում է. «Ապա զորապետների ու զորքերի, ազգերի ու ցեղերի խիստ մեծ թագմություն հավաքվեց. [եկավ] Տարսոնում նստող հունաց պատրիարքը, Մելիտինեի սահմաններում գտնվող Սուրբ Պարսումայի վանքում նստող ասորիների կաթողիկոսը ու հայոց կաթողիկոսը՝ բոլոր եպիսկոպոսներով. և թագավորեցրին Լևոնին, իսկ շրջակա ազգերը ընծաներ բերին թագադրված նորոգ թագավորին»:

Եվ հունաց կայսրը լսելով, որ ֆրանկները թագ տվին Լևոնին, նա էլ ընծաներ, ոսկով ու թանկագին ակներով ընդելուզված գեղեցիկ թագ ուղարկեց ու ասաց. «Հոռմեացիների թագը մի՛ դնիր քո գլուխը, այլ մերը դի՛ր, որովհետև մեզ ավելի մոտիկ ես, քան Հռոմին»: Իսկ Լևոն թագավորը իմաստուն մարդ էր, երկու թագավորներից ոչ մեկին էլ չմերժեց՝ ոչ Հռոմինը և ոչ էլ Կոստանդնուպոլսինը, այլ նրանց կամքի համաձայն պատասխան տվեց, սիրալիք ընդունեց եկվորներից, մեծամեծ նվերներ տվեց թագ քերողներին ու երկուսի կողմից էլ պսակված եղավ»:





**Ե**րուսաղեմի խաչակրաց բազավորության անկումից հետո (1187թ.) զգալիորեն բուլանում են նաև Անտիոքի իշխանապետության դիրքերը, որի համար էլ դեռևս մինչ Կիլիկիայի հայոց բազավոր հռչակվելը Լևոն Մեծագործը գանկանում է իր իշխանությունը հաստատել Անտիոքի վրա: Գրա համար 1194թ. նա Ռուբեն Գ-ի 14-ամյա դստերը՝ իր զարմուխի Ալիսին, ամուսնացնում է Անտիոքի դուքս Բոհեմունդ III-ի որդու՝ Ռայմոնդի հետ, և վերջինս մնում է Լևոնի արքունիքում:

Լևոնն ու Բոհեմունդը պարտավորվում են, որ Անտիոքի գահը ժառանգի Ռայմոնդի Ալիսից ծնված որդին: Այս ամուսնությունից ծնվում է Ռուբեն-Ռայմոնդը, որին Լևոնը որդեգրում է և հռչակում հայոց բազաժառանգ: Այս ամուսնությունից կարճ ժամանակ անց Ռայմոնդը մահանում է: 1201թ. մահանում է նաև Բոհեմունդ III-ը, որից հետո, ըստ վերջինիս ու Լևոնի միջև ձեռք բերված պայմանավորվածության, Անտիոքի իշխանությունը պետք է անցներ Ռուբեն-Ռայմոնդին, սակայն Բոհեմունդ III-ի կրտսեր որդին՝ Տրիպոլիսի դուքս Բոհեմունդը, 1201թ. բանությանը տիրանում է գահին: Լևոն Մեծագործը 1203թ. հարձակվում է Անտիոքի վրա, սակայն լսելով, որ Բոհեմունդ IV-ը օգնության է կանչել Հալեպի էմիրին, խուսափելով նրա հետ ընդհարվելուց, ետ է դառնում:

1207 կամ 1208թ. Լևոնին հաջողվում է Անտիոք մտնել, սակայն չի կարողանում գրավել քաղաքի միջնաբերդը, ուր անբացել էր Բոհեմունդ IV-ը: Եվ երբ նրանք վերստին օգնու-

թյան են կանչում Հալեպի էմիրին, Լևոնն ստիպված նորից մահանջում է:

1216թ. վերջապես Լևոն Մեծագործը գրավում է Անտիոքը, որպեսզի այնտեղ հաստատի իր գերակայությունը: Երբ Անտիոքի իշխանները Լևոնի առջև բացում են քաղաքի դարպասները, Լևոնը զորքով ներս է մտնում, զինվորներ կարգում քաղաքի պարիսպների բոլոր աշտարակների վրա, ինչպես նաև՝ քաղաքի փողոցները լցնում զորքերի բազմությամբ, որոնց առավոտյան տեսնելով՝ ապշած են մնում կատարվածին անտեղյակ քաղաքի բնակիչները, սակայն որևէ ընդհարում, ավերածություն կամ կողոպուտ չի լինում:

Քաղաքի իշխանները Լևոնի զարմիկ Ռուբեն-Ռայմոնդին տանում են Անտիոքի Սուրբ Պետրոսի տաճարը, ուր կարողիկե պատրիարքը նրան Անտիոքի գահակալ է ձեռնադրում, և հավաքվածները նրան հավատարմության երդում են տալիս: Միջնաբերդում անբացածները ևս մի քանի օր անց դադարեցնում են դիմադրությունը և գալիս հպատակություն հայտնում Լևոնին:

Ռայմոնդ-Ռուբենը, սակայն, լինելով բուլական մի անձնավորություն, չի կարողանում պահել իշխանությունը, և Բոհեմունդ IV-ը 1218թ. նրան վերստին քշում է քաղաքից: Նրան Կիլիկիո Հայոց բազավորության գահակալության իրավունքից զրկում է նաև Լևոն Մեծագործը՝ հայոց գահաժառանգ կարգելով իր մանկահասակ դուստր Զաբելին:

**Ջուլիանո Չասսո**

**Լևոն Մեծագործի  
հաղթական մուսքը  
Անտիոք**







Ջուլիանո Չաստ  
 Հերոմ Առաջինը  
 ողբում է  
 իր գավակների՝  
 դասերազմում  
 զոհված թորոսի  
 և գերի ընկած  
 Լևոնի համար



**Ե**գիպտոսի սուլթանը 1266թ. 30 հազարանոց զորքով ներխուժում է Կիլիկիա՝ գրավելով մի շարք քերդեր, այդ թվում՝ Միս մայրաքաղաքը։ Մինչ այդ, փորձելով կանխել սպառնացող հարձակումը, Կիլիկիայի Հերոմ Ա թագավորը հայկական բանակը բաժանում է երեք մասի։ Մի մասը վերցնելով իր հետ՝ Հերոմը գնում է օգնություն խնդրելու մոնղոլներից, երկրորդ մասին հանձնարարվում է «Խոներ» կոչվող կիրճերի պաշտպանությունը, և երրորդ մասը Հերոմի թորոս ու Լևոն որդիների գլխավորությամբ դիրքեր է գրավում Սև լեռների կիրճերում՝ արգելելու հակառակորդի մուտքը Կիլիկիա։

Սուլթանի ուղարկած բանակի հետ ճակատամարտում թորոս իշխանը, որը կրտսերն էր, զոհվում է, իսկ ավագը՝ Լևոնը, գերի է

ընկնում։ Իմանալով իր որդիների հետ կատարվածի մասին, Հերոմը մի ղեսպանությամբ է ուղարկում սուլթանի մոտ, Լևոնին փրկագնելու։ Որպես փրկագին՝ Եգիպտոսի սուլթանը պահանջում է մի շարք քերդեր, ինչպես նաև, որ Հերոմը մոնղոլների մոտից ազատել տա նրանց մոտ գերության մեջ գտնվող եգիպտական մի զորավարի։ Հերոմի միջնորդությամբ մոնղոլները ազատում և ետ են վերադարձնում այդ զորավարին, որից հետո 1268թ. գերությունից ազատվում է և Լևոնը։

Վշտաբեկ Հերոմը 1269թ. հրաժարվում է գահից՝ թագը Խանձնելով Լևոնին, որն այսպիսով դառնում է Լևոն Բ։ Հերոմը, կրոնափորական կարգ ընդունելով, առանձնանում է վանքում՝ ստանալով Մակար եղբայր անունը, և վախճանվում 1270թ.։

Գրիգոր Անճրեցի.  
 Պատմություն  
 ազգին նետողաց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՏԱԲԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԻԹԱՐՅԱՆ ՄԻԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅՈՑ ՊԱՏՍՈՒԹՅԱՆ ԷՋԵՐ իտալացի նկարիչների գրաֆիկական աշխատանքներում

Կազմում և խմբագրում  
Համլետ Գասպարյան  
Հ. Հարություն Վրդ. Պզտիկյան  
Հրաչ Գասպար

Ետպատրաստում  
Վարդան Պերիկյան


Ձևավորում  
Սամվել Փարթամյան

Հրատարակության պատրաստմանը նպաստել են  
Հրայր Բազե Խաչերյանը, Ջավեն Սարգսյանը,  
Վանուհի Եղիշյանը



Տպագրված է  
Տիգրան Մեծ հրատարակչության տպարանում  
Երևան 2007





Երևան 2007

